

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



Հասարակական գործողություններից
դեպի ինստիտուցիոնալ փոփոխություններ.
բնապահպանական քաղաքականության երկխոսություն

Բնապահպանության քաղաքականության մշակման առաջարկներ

Հասարակական գործողություններից
դեպի ինստիտուցիոնալ փոփոխություններ.
Բնապահպանական քաղաքականության երկխոսություն



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART
INTERNATIONAL



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ **Հրայր Մարուխյան հիմնադրամի** միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ **Հրայր Մարուխյան հիմնադրամին**, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ISBN 978-99941-2-780-1

Բովանդակություն

Ներածություն	4
Բնապահպանական շարժում	7
Բնապահպանական շարժման բնութագրությունը	7
Բնապահպանական շարժումների ինստիտուցիոնալացումը. Իրականացման հնարավոր եղանակները	9
Բնապահպանական շարժման ինստիտուցիոնալացումը. Ցուցիչները.....	11
<i>Բնապահպանական բողոքի ցույցեր.....</i>	14
<i>Բնապահպանական ճնշող խմբերի ազդեցության տեսակները (Carter 2007).....</i>	14
Շարժման մասնակիցների համագործակցությունը	14
Գիտության դերը բնապահպանական ակտիվիզմում	15
Պետության դերը բնապահպանական հարցերում	16
Ինստիտուցիոնալ շրջանակ.....	16
Օրենսդրական շրջանակ	20
Բնապահպանական քաղաքականություն	21
<i>Ռազմավարական փաստաթղթեր</i>	21
<i>Խորհուրդներ.....</i>	22
<i>Մասնակցություն միջազգային բնապահպանական կոնվենցիաներին.....</i>	23
<i>Բնապահպանական քաղաքականության գործիքներ՝ միմյան բնապահպանական քաղաքականության իրագործմանը.....</i>	25
Ժողովրդավարություն և մասնակցություն	30
Բնապահպանական նկատառումները որոշումների ընդունման գործընթացում	31
Առաջարկություններ բնապահպանական շարժման և ակտիվիզմի վերաբերյալ	35
Առաջարկություններ կառավարության «կանաչեցման» համար	38
Գրականություն	40

Ներածություն

Գոյություն ունեն շրջակա միջավայրի կառավարման մի շարք հասկացություններ: Այլ կերպ ասած, շրջակա միջավայրի կառավարումն իրականացվում է համապատասխան պետական մարմինների կամ շարժման մասնակիցների կողմից (պետական մարմիններ և Բնապահպանական Շարժման Կազմակերպություններ (ԲՇԿ)), որոնց նպատակն է մեղմացնել բացահայտված բնապահպանական խնդիրները: Ի տարբերություն որոշումներ կայացնելու վերևից ներքև մոտեցման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի նկատմամբ հարկադրանքի, շրջակա միջավայրի կառավարումը ներառում է ուժի այնպիսի տեղաբաշխում, որի դեպքում հասարակությունը և քաղաքացիական հասարակության այլ անդամներ՝ ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, բնապահպանական շարժման կազմակերպությունները, կարող են ներգրավվել օրենսդրական գործընթացների և քաղաքականության մշակման բոլոր ոլորտներում առկա խնդիրների բացահայտման և ձևակերպման, ինչպես նաև հետագա գործունեության իրականացման և վերահսկման ընթացքի մեջ:

Շրջակա միջավայրի կառավարման մեջ առկա են բազմաթիվ հայեցակարգային հեռանկարներ, որոնք մշակվել են նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում: Այդ շարքին է պատկանում բազմակարծությունը (ներգրավված մի քանի մասնակիցների կառավարման համակարգը): Բազմակարծության մոտեցումը առաջնորդվում է այն հանգամանքով, որ հանրային քաղաքականությունը հանդիսանում է մրցակցող շահերի և սահմանափակ ռեսուրսների արդյունքը, իսկ պետական հաստատությունների պարտավորությունների մեջ է մտնում տրամադրել հավաստի, թափանցիկ և բաց դաշտ, որտեղ սոցիալական խնդիրներին առնչվող որոշումները կարող են ճիշտ ընթացք ստանալ: Բազմակարծությունը կարևոր է նաև շրջակա միջավայրի կառավարման ժամանակակից մոտեցման մեջ՝ մասնավորապես շեշտելով հասարակության մասնակցությունը բնապահպանական քաղաքականության մշակման գործընթացում: Փորձագետները և հետազոտողները նշում են, որ հասարակությունը և քաղաքացիական շարժման մասնակիցները, ինչպիսիք են ոչ պետական կազմակերպությունները, ավելի ցայտուն և նկատելի գործողություններ են իրականացնում, որով ձգտում են առաջ քաշել խնդիրներն ու պահանջները և փորձում են ներգործություն ունենալ բնապահպանական քաղաքականության մշակման և օրենսդրության մեջ առկա որոշումներ կայացնելու գործընթացում: Քաղաքացիական հասարակության մասնակիցների՝ մասնավորապես ոչ պետական կազմակերպությունների մասնակցությունը մեծ դեր է ստանձնում ժողովրդավարական համակարգում շրջակա միջավայրի կառավարման ոլորտում: Շրջակա միջավայրի կառավարումը նպաստում է տարբեր խմբերի միջև համագործակցության առաջացմանը, որի շնորհիվ մշակվում են բնապահպանական խնդիրների նորարարական և արդյունավետ լուծումներ, ինչպես նաև ամրապնդում են արդեն իսկ հաջողված ձեռքբերումների պարտավորությունները: Հասարակական կազմակերպությունների դերակատարման վերաբերյալ առկա են երկու տարբեր տեսլականներ: Մի կողմից ՀԿ-ները ներկայացնում են հասարակության կարծիքը կամ համարվում են միևնույն վերաբերմունքը և հետաքրքրությունների շրջանակը կիսող մարդկանց որոշակի խումբ: Մյուս կողմից նրանք ընկալվում են իբրև պետական հաստատությունների գործընկերներ և համագործակցում են համապատասխան պետա-

կան մարմինների հետ, ինչի արդյունքում ստեղծվում է այնպիսի պատկեր, ըստ որի ՀԿ-ները ներկայացվում են որպես կոռուպացված և քաղաքականացված մարմիններ:

Այն երկրներում, որտեղ ժողովրդավարական համակարգն ավելի թույլ է, իշխանությունները (կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, վերահսկող կառույցները) նշում են, որ ՀԿ-ները իրենց իրական հնարավորություններին և կարողություններին համապատասխան պետք է ստանձնեն մի շարք պարտականություններ անհրաժեշտ գործողություններն իրականացնելու համար (օրինակ, ցուցադրական գործողությունների և իրավական ճնշումների միջոցով ներգրավվել որոշումներ կայացնելու գործընթացում): Այսպիսով, նրանց վարչական ուժը կարող է գերազանցել կառավարությանը՝ Բնապահպանական Շարժման Կազմակերպություններին առավել մեծ հնարավորություններ ընձեռելով գործողությունների ծավալման, քաղաքականության մշակման և օրենքի ազատության համար:

1991 թվ-ին Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանն անկախություն ձեռք բերեց և դուրս եկավ Խորհրդային Միությունից: Այս ամենն իրականացավ կառավարության վրա հանրային ճնշման արդյունքում, որն ուղեկցվում էր զանգվածային գործողություններով: Հետևաբար, առավել խելամիտ կլինի նշել, որ Հայաստանի Հանրապետության ստեղծման հիմքում կարևորվում է հասարակական ակտիվիզմը և փողոցային գործողությունները: 2000-ական թթ-ի սկզբին երկրում սոցիալ-տնտեսական ճգնաժամից հետո ի հայտ եկան հասարակական ակտիվիզմի նախանշանները: Հասարակական ակտիվիզմը հանդիսանում է նորաստեղծ պետության անբաժանելի մասը և ստեղծում է ժողովրդավարական համակարգ հասարակության համար ազգային և միջազգային մակարդակում: Բնապահպանական խնդիրներին առնչվող հասարակական ակտիվիզմի նախանշաններն ի հայտ եկան 2000-ական թթ-ի կեսերին, երբ քննադատության ենթարկվեցին երկրում հանքարդյունաբերության ռազմավարության խնդիրները, որը բարձրաձայնվել էին հասարակության լայն շերտերի կողմից: Որոշ փորձեր հաջողվեցին, իսկ որոշները՝ ոչ: Սակայն այս գործողությունները չհանգեցրեցին ինստիտուցիոնալ փոփոխությունների, որոնք կարող էին արտացոլվել ներկայիս քաղաքականության և օրենսդրության մեջ: Անկախ արդյունքներից՝ որոշումներն ընդունվում են մեկ դեպքի հիման վրա, որում առկա է օրենքի անհամապատասխանություն և ազդեցություն չի ունենում հասարակական ակտիվիզմին առնչվող հետագա որոշումների կայացման վրա, որը ձևավորվում է համընդհանուր շահերի վրա:

Բնապահպանական ակտիվիզմի հիմնախնդիր է համարվում նաև այն հանգամանքը, որ բացակայում են այնպիսի կոնկրետ կանոններ, ուղեցույցներ և օրենսդրություն, որոնք թույլ կտային ծավալել հավանական բանակցություններ հասարակության և պետական մարմինների միջև: Ներկայումս գոյություն չունեն կառավարող և որոշում կայացնող իրավասու մարմիններ, որոնք հաշվի կառնեին քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կամ ընդհանուր հասարակության կարծիքները: Այդ իսկ պատճառով, քաղաքացիական հասարակության ՀԿ-ների կամ ակտիվիստական խմբերի կողմից տրված այլընտրանքային առաջարկները չեն ներառվում քաղաքականության մշակման գործընթացում:

Կամավորական հանձնախմբի ստեղծումը կարող էր գնահատել հասարակության կողմից առաջ քաշված պահանջները՝ ելնելով վերջիններիս գիտական և բնապահպանա-

կան հիմնավորվածությունից: Այնուհետև դրանք կարող էին փոխանցվել որոշում կայացնող մարմիններին: Վերջիններս պարտավորվում են վերանայել այդ հանձնախմբի կողմից մշակված առաջարկությունները և մշակել դրանց կիրառման մեխանիզմները:

Շատ դեպքերում կառավարական համակարգը ի վիճակի չէ և չունի ոչ մի դրդապատճառ հասարակական ակտիվիզմի հետ բանակցություններ վարելու համար: Հետևաբար, բանակցություններ վարելիս ընդդիմադիր կողմում բացակայում են կոնկրետ պլաններ: Սա արտացոլվում է ներկայիս բնապահպանական օրենսդրության մեջ, որը համարվում է գործող օրենսդրության ամենահին փաստաթուղթը (1995): Այն վերանայվում և վերահսկվում է առանձին ռազմավարության և գործողությունների միջոցով, որոնք ներառում են նաև մի քանի այլ զուգորդված քաղաքականություններ:

Այսպիսով, այս փաստաթուղթը ներկայացնում է հնարավոր ռազմավարություններ, առաջարկություններ և գործողություններ, որոնք նպատակ են հետապնդում զարգացնել երկխոսության մեխանիզմ կառավարության, նախարարությունների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև հասարակական ակտիվիստների միջև: Այս գործընթացների արդյունքում հասարակական զանգվածային գործողությունները կարող են հանգեցնել հաջողված ինստիտուցիոնալ փոփոխությունների՝ ամբողջական քաղաքականության մշակման, օրենսդրության, օրենսդրական ակտերի կամ կանոնների:

Բնապահպանական շարժում

Բնապահպանական շարժման բնութագրությունը

Բնապահպանական շարժումները մասնակիցների միջև ստեղծում են ոչ պաշտոնական փոխազդեցություն, որը կարող է ներառել թե անհատների և թե խմբերի, որոնք չեն հարում որևէ կազմակերպության, ինչպես նաև բազմաբնույթ կազմակերպությունների, որոնք ունեն բնապահպանական խնդիրների վերաբերյալ միևնույն դիրքորոշումները և մասնակցություն են ցուցաբերում հավաքական գործողություններում (օրինակ, ներառելով նույնիսկ քաղաքական կուսակցությունները՝ մասնավորապես Կանաչների կուսակցությունը):

Բնապահպանական շարժումներն աչքի են ընկնում հասարակության տարբեր շերտերը համախմբելու և բնապահպանական ոլորտում միևնույն հայացքները կիսելու հատկությամբ (հասարակության տարբեր շերտեր ասելով նկատի ունենք այն խմբերին, որոնք հիմնականում չեն հարում որևէ քաղաքական ուժի): Առհասարակ բնապահպանական շարժումները ծավալում են նկատելի գործողություններ, որոնց անվանում են փողոցային (street action), որոնց արդյունքում, համաձայն զարգացած երկրների փորձառության, տեղի է ունենում բնապահպանական շարժումների և կառավարության և որոշում կայացնող մարմինների միջև բանակցությունների մակարդակի փոփոխություն: Չնայած, նույն բնապահպանական խմբի կողմից կազմակերպված տարբեր շարժումները, գործողությունների ձևերը, դրանց հետևանքները և ներգրավվածության մակարդակը կարող է տարբերվել:

«Երբ բնապահպանական շարժումները լավ են զարգացած, նրանց գործողությունների հավասարակշռությունը առավել նկատելի գործողություններից վերածվում է առավել աննկատ բանակցությունների (lobbying), նույնիսկ պետական մարմինների և կորպորացիաների հետ կառուցողական ներգրավվածության»: (Rootes, 2007)

Չնայած բնապահպանական խնդիրների բարձրաձայնումը նկատելիորեն աճել է, ներառելով տեխնոլոգիաների, գիտության և բիզնեսի ոլորտները, սակայն համաշխարհային առումով բնապահպանական ակտիվիզմը ծնունդ է առել դեռևս 1960-ական թթ-ի կեսերին: Իրականում այն ավելի մեծ կապ ունի միջազգային մակարդակով հասարակության լայն շերտերի կողմից ժողովրդավարության հիմնարար արժեքների գիտակցման հետ:

Արագ աճող ուրբանիզացիայի և ինդուստրացման նկատելի տեմպերը ստիպել են բնապահպաններին գաղափարապես ընդդիմանալ արդյունաբերական համակարգի գերզարգացմանը, որի արդյունքում տեղի էր ունենում բնական ռեսուրսների անկայուն կիրառում և շրջակա միջավայրի ոչ պլանավորված շահագործում: Համաշխարհային փորձի առնչությամբ Հայաստանում բնապահպանական իրականության մեջ գրանցվել է մի դեպք, որն առաջացել է շրջակա միջավայրի շահագործման արդյունքում: Վերջինս վերաբերում է Սևանա լճի կործանիչ ծրագրին, որի արդյունքում տեղի ունեցավ աշխարհի ամենամեծ և ամենաբարձր լճերից մեկի ջրի մակարդակի ծայրահեղ նվազում:

«ԱՄՆ-ում բնապահպանությունը, ունենալով հասարակական կոնսենսուս, օգուտ քաղեց լարված քաղաքական բևեռացման ժամանակաշրջանում, սակայն շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքը շուտով ստեղծեց նոր և ավելի արմատական Բնապահպանական Շարժման Կազմակերպություններ (ԲՇԿ), որոնք կիրառեցին ոչ բռնի ուղղա-

կի գործողություններ (nonviolent direct action): Վերջիններս արագորեն տարածում գտան Արևմտյան Եվրոպայում»: (Rootes 2007)

Դրա արդյունքում ձևավորվեցին Բնապահպանական Շարժման Կազմակերպություններ (ԲՇԿ): ԲՇԿ-ները կարողանում էին արդյունավետորեն օգտագործել զանգվածային լրատվության միջոցները: Նրանք անուղակիորեն ուժի ազդեցությամբ ճնշում էին կառավարությանը, կորպորացիաներին և որոշում կայացնող մարմիններին՝ իրենց բնապահպանական ակտիվիզմը կենտրոնացնելով հիմնավորված պատճառների վրա, ինչի արդյունքում ամրագրվում էին ներկայացված պահանջները: Այսպիսով, բնապահպանական ակտիվիզմի հաջողությունը կարող է նշանակել ինստիտուցիոնալացում՝ նույնիսկ որպես քաղաքական կուսակցություններ: Ներկայումս ամբողջ աշխարհում քաղաքական համակարգն այնքան է զարգացել, որ կարող է ճկունություն ցուցաբերել համապատասխան մակարդակում ակտիվիզմի հաստատման համար, որը տրամաբանորեն կիրառելի և իմաստալից է որևէ խմբակցության կամ կառավարական մարմնի կողմից ամրագրման համար: Սա կարող էր իրականություն դառնալ, եթե ակտիվիզմի և որոշում կայացնող պետական մարմինների միջև կապը ոչ թե անհասանելի, այլ հնարավոր լիներ:

Մինևույն ժամանակ զարգացած երկրներում բնապահպանական ակտիվիզմն ընկալվում է իբրև թիրախավորված քաղաքական գործողություն, որը ներառում է ավելի շատ իրական գործողություններ, քան տեսական հիմք: Վերջինս նպատակ է հետապնդում բարձրաձայնել և լուծել բնապահպանական հիմնախնդիրներ թե տեղական և թե համաշխարհային մակարդակում: Ի հայտ գալով դեռևս 1960-ական թթ-ին՝ ներկայումս միջազգային բնապահպանական ակտիվիզմը գրանցել է մի շարք համաշխարհային հաջողություններ, ինչպիսիք են թթվային անձրևների նվազեցումը, օզոնային շերտի վերականգնումը և ամենակարևորը՝ բնապահպանների և նրանց գործողությունների ինտեգրումը մի քանի միջազգային պայմանագրերի և համաժողովների ստեղծման մեջ (Kyoto 1997, AARHUS 2001):

Հայաստանը մասնակցում է այս պայմանագրերի ստորագրմանը՝ հաշվի չառնելով ԲՇԿ-ների և բնապահպան ակտիվիստների ներգրավումը այդ գործընթացներում: Ներկա իրավիճակը ունի երեք հիմնական պատճառներ.

1. Մասնակիցների միջև թյուրիմացություն,
2. Համաձայնագրերի և պարտավորությունների սխալ մեկնաբանում,
3. Կոռուպցիայի պատճառով համապատասխան պարտավորությունների անտեսում:

Միջազգային փորձի համաձայն՝ բնապահպանական շարժման հավանական վտանգը հանդիսանում է նրանում, երբ անհատները կամ շարժման հիմնական մասնակիցները կայանում են իրենց մասնագիտական ոլորտում (համալսարանական դասընթացներ, արտադրական կազմակերպություններ), ինչը, այլ կերպ ասած, ենթադրում է բախում շարժման մասնակիցների համընդհանուր և անձնական շահերի հետ:

Եթե հաշվի առնենք ԲՇԿ-ների քանակը, եկամուտը, պաշտոնական մակարդակը, անձնակազմի քանակը և փորձառությունը, պետական մարմինների հետ համագործակցության հաճախականությունը, ապա կարելի է ենթադրել, որ զարգացած երկրներում նրանք համեմատաբար ավելի հաստատված են, քան դեռևս զարգացող երկրներում:

«Շատերն անհանգստանում են, որ ինստիտուցիոնալացումը ԲՇԿ-ներին վերածել է «բողոք ներկայացնող» կամ «հասարակության շահերը ներկայացնող» մարմնի, որի շար-

քերը համալրվում են նոր աջակիցներով: Դեռևս 1990-ական թթ-ին Գերմանիայում գործել է մի ինստիտուցիոնալացված շարժում, որը ընթացք է տվել շատ ընդդիմադիր, ժամանակ առ ժամանակ դաժան հակամիջուկային բողոքի ցույցերի, իսկ գործող ԲՀԿ-ները աջակցել են տեղի հակամիջուկային բողոք ներկայացնող խմբերին»: (Rucht & Roose 2003) Նույն ժամանակաշրջանում Բրիտանիայում ԲՀԿ-ները աճեցին և թվաքանակով, և ազդեցության աստիճանով, իսկ բնապահպանական բողոքներն ավելացան և ձեռք բերեցին էլ ավելի ընդդիմադիր բնույթ (Rootes 2007):

Earth First! խմբի նման առավել արմատական և նոր խմբերի ի հայտ գալը որոշ գործող ԲՀԿ-ների մոտ դժգոհության ալիք բարձրացրեց, սակայն կարևորվեց բնապահպանական ոլորտի գաղափարախոսությունը՝ չնայած այն հանգամանքին, որ տարբերվում էին նրանց գործողությունների մարտավարությունը: Նույնիսկ իրենց գործողությունների մեջ անկազմակերպ թվացող շարժումները խորհրդակցում և աջակցություն էին ձեռք բերում առավել զարգացած և փորձառու ԲՀԿ-ներից: Բրիտանական բնապահպանական շարժման բաղկացուցիչ խմբերի ինքնության զգացումը չէր տարբալուծվում առավել զարգացած կազմակերպությունների ինստիտուցիոնալացման և հակառակ ռեակցիայի արդյունքում: Ընդհակառակը, այդ խմբերը իրականացնում էին աշխատանքի բաժանում և գիտակցում էին համագործակցության առավելությունները (Rootes 2007):

«Հայաստանում բնապահպանական հասարակական կազմակերպությունների ոլորտն ակտիվ է, կատարում է բազմաթիվ փորձաքնություններ և լավ է իրականացնում վերահսկման գործառնությունը: Սակայն ՀԿ-ների համար ավելի դժվար է վերահսկել միջավայրի համապատասխանությունը, ինչպես նաև քաջալերել հասարակությանը նոր դեպքեր վերհանելու նպատակով, քանի որ, տարածված կարծիքի համաձայն, այդպիսի գործողությունները չեն կարող ազդել իրադրության վրա: Ընդհանուր առմամբ, իրավական դաշտը քաղաքացիներին ընձեռում է բազմաթիվ հնարավորություններ՝ նպաստելու բնապահպանական որոշումների կանոնակարգմանը և համապատասխանության ապահովմանը: Դժբախտաբար, ՀԿ-ները գտնում են, որ հասարակության ներգրավվածության մեխանիզմները դեռևս թերզարգացած են: Հաճախ հասարակություն- բնապահպան ակտիվիստներ – ԲՀԿ ոլորտը ներառվում է առավել պետական մակարդակ՝ հաշվի առնելով ոչ թե երկխոսություն ծավալելու անհրաժեշտությունը, այլ ընթացակարգային պահանջները: Այդ իսկ պատճառով, հասարակության ներգրավվածության մեխանիզմները զարգացնելու խիստ անհրաժեշտություն է զգացվում: Բնապահպանական պետական տեսչության կողմից կազմակերպված հասարակական լուծումների 25 մասնակիցները պետք է տեղեկացված լինեն այն բնապահպանական թույլտվությունների ժամկետների և պայմանների մասին, որոնք պետք է քննարկվեն հաջորդող լուծումների ժամանակ: Ավելին, տեսչությունը պետք է ավելի շատ համագործակցի ՀԿ-ների հետ, պարբերաբար խորհրդակցի հնարավոր համատեղ գործողությունների մասին, մշակի համատեղ ծրագրեր և իրականացնի դրանք» (OECD 2005):

Բնապահպանական շարժումների ինստիտուցիոնալացումը. Իրականացման հնարավոր եղանակները

Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ բնապահպանական շարժումները կարող են ձեռք բերել խիստ նպատակային շարժումների մի շարք հատկանիշներ, եթե հաշ-

վի առնեն ինստիտուցիոնալացման ընձեռած հնարավորությունների առավելությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջինս չի խոչընդոտում բողոքի ցույցերի կազմակերպմանը (այդպիսին է Greenpeace ակտիվիզմը): Ազգային և տեղական քաղաքական մշակույթները և նյութական տարբերությունները ազդում են բնապահպանական շարժումների ձևերի, զարգացման և արդյունքների վրա, քանի որ տեղի են ունենում փոփոխություններ քաղաքական կառույցների միջև: Ազգային ԲՇԿ-ները իրենց ռեսուրսների և օրինականության առումով կախված են ազգային հանրությունից, իսկ նրանց զարգացման տեմպերը և հետագծերը որոշվում են տեղական և ազգային յուրօրինակ իրադարձությունների և հաստատությունների կողմից: Հետևաբար, ազգային բնապահպանական շարժման համակենտրոնացումը դժվար է: Նույնիսկ գերզարգացած պետական կառույցի՝ Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի շրջանակներում ԲՇԿ-ները իրենց համագործակցությամբ, խմբակային գործողությունների ռազմավարությամբ և գաղափարախոսությամբ հիմնականում պահպանում են իրենց դիրքը ազգային մակարդակում՝ չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական Միությունը կարևոր դեր է խաղում բնապահպանական քաղաքականության մշակման գործընթացում (Rootes 2004 b):

ԲՇԿ-ները հանդիսանում են ամբողջ գործընթացի հիմնական դերակատարները կամ ճնշող ուժը այն դեպքում, երբ կարողանում են հասնել գործնական փոփոխությունների քաղաքականության մշակման հարցում:

Ըստ Քարթերի (2007)՝ բնապահպանական ճնշող խմբերը հավանաբար բնապահպանական շարժման ամենաբացահայտ արտահայտությունն են: Ճնշող խմբերի բազմաթիվ գործողությունները հիմնվում են այնպիսի պայմանական քաղաքական գործունեության ձևերի վրա, ինչպիսիք են լոբբինգը և կրթությունը: Բնապահպանական շարժումը շատ բազմազան է և ներառում է բնական միջավայրի պահպանման ավանդական կազմակերպություններ (Royal Society for the protection of birds, Sierra Club), միջազգային ՀԿ-ներ (Friends of Earth, Greenpeace), արմատական խմբեր (Earth First! Robin Wood), ինչպես նաև մի շարք ժողովրդական խմբեր:

Բնապահպանական ճնշող խմբերը պետք է համապատասխանեն ռեսուրսների մոբիլիզացման և քաղաքական ազդեցության երկու հիմնական պահանջներին:

- Ռեսուրսների մոբիլիզացման դեպքում պետք է հաշվի առնել խմբակային գործողության համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը և ապահովումը: Սա կարող է լուծվել երկու եղանակով.
 1. Ընդհանուր հասարակության աջակցության միջոցով զանգվածային անդամակցության և դրամահավաքի իրականացում (մասնագիտացված կազմակերպության ստեղծման նպատակով) կամ,
 2. Անդամակցության խթանման միջոցով մարդկային ռեսուրսների մոբիլիզացում: Վերոնշյալ երկու տարբերակների միջև տարբերությունը կայանում է մասնագիտացված և մասնակցային ակտիվիզմի միջև ընտրության մեջ:
- Քաղաքական ազդեցությունը վերաբերում է ռազմավարության և մարտավարության ընտրությանը: Ահա երկու հիմնական կետերը.
 1. Քաղաքական բանակցությունների ավանդական մոտեցումը, որը հանդիպում է գործընթացին բնորոշ քաղաքական կանոններին, կամ

2. Ռազմավարություն, որը փոխում է բարդ քաղաքական վարքագիծը՝ վերացնելով գոյություն ունեցող կանոնները:

Այսպիսով, առկա են երկու հիմնական ընդդիմադիր գաղափարներ՝ մասնագիտացված և մասնակցային կազմակերպչական ձևաչափերի, և ճնշման կործանիչ և ավանդական ձևերի միջև: Այս տարբերակներն առաջացնում են չորս կազմակերպչական տեսակներ.

1. Հանրային շահերը ներկայացնող լոբբի,
2. Մասնակցային բողոքի ցույցերի կազմակերպում,
3. Մասնագիտացված բողոքի ցույցերի կազմակերպում,
4. Մասնակցային ճնշող խումբ:

Հանրային շահերը ներկայացնող լոբբին ղեկավարվում է մասնագիտական անձնակազմի կողմից, ընդգրկում է ավելի քիչ մասնակիցներ և կիրառում է ճնշման գործադրման ավանդական մարտավարությունը՝ առաջնորդվելով անհատների՝ այսինքն հիմնական դերակատարների մասնագիտական աջակցությամբ:

Մասնակցային բողոքի ցույցերի կազմակերպումը հիմնվում է մասնակցային գործողության, ենթամշակութային կառույցների և կործանիչ բողոքի ցույցերի վրա, որը չի հանդիսանում կայուն ռազմավարություն քաղաքականության մշակման երկարատև ընթացքի համար: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է անընդհատ ճնշում գործադրել որոշակի խնդրի վրա:

Մասնագիտացված բողոքի ցույցերի կազմակերպումը համապատասխանեցնում է մասնագիտացված ակտիվիզմը և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը ընդդիմադիր մարտավարության կիրառման հետ: Այն ներառում է նաև ավանդական մարտավարությունը, որը կայանում է ճնշող ուժի գործադրման ռազմավարության, ցույցերի ժամանակ առանցքային կազմակերպչական դերը կատարելու և հետագայում ճնշում գործադրելու գործընթացի:

Մասնակցային ճնշող խումբը ներառում է շարքային անդամներ, աջակիցներ և օգտագործում է ճնշման գործադրման ավանդական մեթոդները:

Աղյուսակ 1. Անկուսակցական քաղաքական կազմակերպությունների տիպաբանությունը

	Ավանդական ճնշում	Պառակտում
Մասնագիտական ռեսուրսներ	Հանրային շահերը ներկայացնող լոբբին	Մասնագիտացված բողոքի ցույցերի կազմակերպում
Մասնակցային ռեսուրսներ	Մասնակցային բողոքի ցույցերի կազմակերպում	Մասնակցային ճնշող խմբերի ձևավորում

Աղբյուրը. Diani and Donati (1999)

Բնապահպանական շարժման ինստիտուցիոնալացումը. Ցուցիչները

Չնայած այն հանգամանքին, որ իրականացվել են հետազոտություններ տեղական բնապահպանական հաստատությունների (Tews et al. 2003; Holzinger et al. 2008), ինչպես նաև միջազգային բնապահպանական համաձայնագրերի և պայմանագրերի վերաբերյալ (Young 1989; Haas et al. 1993; Mitchell 2003), սակայն երկու ոլորտների դեպքում էլ չեն համակարգվել այն գործոնները, որոնք կարևոր են բնապահպանական քաղաքականության ինստիտուցիոնալացման գործընթացում:

«Հետազոտությունները չեն ներառում և համեմատություն չեն անցկացնում տեղական և միջազգային բնապահպանական հաստատությունների միջև, ինչպես նաև չեն մշակում տեսություն բնապահպանական քաղաքականության ինստիտուցիոնալացման վերաբերյալ: Այս առումով զարմանալի չէ, որ բացակայում են մշակված տեսական հայեցակարգերը: Մինչև այժմ առկա են միայն տեղական բնապահպանական քաղաքականության արդյունքներին առնչվող որոշ փաստարկներ:» (Scruggs 2003)

Հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ բնապահպանական խնդիրները հարուցում են որոշակի հակազդեցություն: Այս հանգամանքն է ընկած ՏՀԶԿ Ճնշում-Պետություն հակազդեցության ձևաչափի հիմքում (OECD Environmental Indicators 2005), որը ծառայում է որպես տվյալների հավաքագրման ուղեցույց: Գաղափարն այն է, որ մարդու գործունեությունը առաջացնում է բնապահպանական խնդիրներ (ճնշում), որը կարող է որոշվել՝ դատելով բնապահպանական և բնական ռեսուրսների պայմաններից (պետություն): Տնտեսական, բնապահպանական և սոցիալական միջոցները մի կողմից ազդում են բնապահպանական և բնական պայմանների փոփոխության վրա, իսկ մյուս կողմից՝ մարդկանց գործունեության: Չնայած այս ուղեցույցը ծառայում է իբրև տվյալների հավաքագրման գործիք, սակայն այն չի բացատրում պատճառահետևանքային մեխանիզմների գործառնությունները: Այնուամենայնիվ, այն կարող է հանդիսանալ մեկնարկ գործունեների նույնականացման համար, որոնք առնչվում են բնապահպանական ինստիտուցիոնալացմանը: Բնապահպանական շարժման ինստիտուցիոնալացումը ենթադրում է բնապահպանական արժեքների գիտակցում և ընդունում, իսկ հավաքական գործողությունը պետք է դառնա ստեղծված քաղաքական համակարգի կանոնավոր բնութագիրը: Վան դեր Հայդը (1997) նշում է ինստիտուցիոնալացման երեք ոլորտները.

1. Կազմակերպչական զարգացում անդամակցության և եկամտի միջոցով,
2. Ներքին ինստիտուցիոնալացում կազմակերպության մասնագիտացման և համակենտրոնացման միջոցով,
3. Արտաքին ինստիտուցիոնալացում ոչ ավանդական գործողություններից ավանդական գործողությունների անցնելու միջոցով (օրինակ լոբբինգը), քանի որ խմբերը կարող են կանոնավոր մասնակցություն ցուցաբերել քաղաքականության մշակման գործընթացում:

Ըստ Քարթերի (2007)՝ չնայած բնապահպանական շարժումների ինստիտուցիոնալացման ոլորտում առկա էական փոփոխություններին, գաղափարամետ բնապահպանական շարժումն հեղափոխության փոխարեն ընտրում է բարեփոխումների ճանապարհը: Քաղաքական համակարգում գործունեություն ծավալելու նպատակով այն ձեռքբազատվում է արմատական սոցիալական շարժումներից: Այսպիսով, մասնակցության սկզբունքները և ոչ ավանդական մարտավարությունը փոխարինվել են մասնագիտական և ավանդական մեթոդներով:

Արդեն իսկ ձևավորվում են հասարակության շահերը ներկայացնող մասնագիտական խմբեր, որտեղ կամավորները (կառավարում, իրավական խորհրդատվություն և լոբբինգ) փոխարինվում են մասնագետներով (ղեկավարներ, իրավաբաններ, դրամահավաքներ, լոբբիստներ և գիտնականներ): Ներկայումս Հայաստանում բնապահպանական ակտիվիզմը գտնվում է կամավորներից դեպի մասնագետներ վերափոխման շրջանում: Այժմ ակտիվիստական խմբերը հիմնականում բաղկացած են կամավորներից, որոնք գործում

են մասնագետների հսկողության ներքո: Բազմաթիվ ակտիվիստական խմբեր, որոնք համախմբվում են միևնույն գաղափարի շուրջ, արդեն ենթարկվել են վերափոխման և գործում են մասնագիտորեն: Այնուամենայնիվ, այս խմբերն աշխատում են կամավորական սկզբունքով հիմնված խմբերի միջոցով, որոնք ավելի ակտիվ են ցուցադրական բողոքի ցույցերի ժամանակ:

Այժմ քաղաքական քարոզարշավները ներառում են տեղեկատվության տարածում, լոբբինգ և կիրառում են շրջակա միջավայրի պահպանման իրավական համակարգը: Բնապահպանական ճնշող խմբերը ներգրավված չեն քաղաքական գործընթացներում՝ քաղաքական գործիչների հետ կանոնավոր երկխոսություն ծավալելու կամ մտահոգությունները իրավական գործընթացների քննարկման ժամանակ ներկայացնելու միջոցով:

Ինստիտուցիոնալացման հետ մեկտեղ բնապահպանական խմբերը չեն հրաժարվել ուղղակի գործողություններից (օրինակ, Greenpeace): Նրանք կարևորում են լրատվամիջոցների կիրառման անհրաժեշտությունը և արագորեն նմանվում են հասարակության ուշադրությունը գրավող թատերական աճապարարների: Ուղղակի գործողություններ ծավալելուն զուգահեռ բնապահպանական խմբերն աշխատում են արդյունաբերական ոլորտի հետ: Երկու մոտեցումներն աշխատում են զուգահեռաբար: Որոշ քարոզարշավների ժամանակ (օրինակ, North Sea ձկան արտադրության արշավը) կիրառվում են ոչ ավանդական և ավանդական ռազմավարության բազմաթիվ տարբերակներ՝ ընտրելով համապատասխան գործիք, որի միջոցով կարելի է հասնել որոշակի նպատակի (ընդդիմադիր գործողություններից մինչև երկխոսության ծավալում):

Հիմնական բնապահպանական կազմակերպություններին զուգահեռ գործում է նաև ժողովրդական բնապահպանական շարժումը: «Ժողովրդական» բնորոշման մեջ կարելի է առանձնացնել երեք հիմնական բաժիններ.

1. Արմատական սոցիալական շարժումներ (օրինակ, Robin Wood, Earth First!, Հայաստանում *Փրկենք Թեղուրը, Թռչկան, և այլն*)
2. Փոքր խմբեր, որոնք պայքարում են որոշակի անցանկալի տարածքների օգտագործման դեմ,
3. Խմբերի մեծ կոալիցիա (US Environmental Justice Movement), որը կարող է ներառել մյուս երկու բաժինների խմբերը:

Արմատական սոցիալական խմբերը ունեն բացառապես էկոլոգիական և ոչ մշակութային ուղղվածություն և կազմում են ժողովրդական շարժման ամենաարմատական ճյուղը: Չնայած այդ խմբերից մի քանիսն ունեն ազգային կամ նույնիսկ միջազգային կառուցվածք, սակայն նրանք պահպանում են իրենց ժողովրդական բնույթը՝ թե մասնակցային, ապակենտրոնացված կառուցվածքով և թե ինստիտուցիոնալացման բոլոր ձևերը մերժելու իրենց գաղափարախոսությամբ:

Որոշակի անցանկալի տարածքների օգտագործման դեմ պայքարող փոքր խմբերը ներգրավում են բազմաթիվ ժողովրդական խմբերի: Նրանք հիմնվում են տեղական համայնքում և ձևավորվում են «Ոչ իմ բակում» շարժման մասնակիցների կողմից՝ հաշվի առնելով անցանկալի տարածքի օգտագործման դեպքը (օրինակ, նոր ճանապարհի կամ աղտոտող գործարանի օգտագործում): «Ոչ իմ բակում» շարժման խմբերը գոյություն ունեն ամենուրեք և կիրառում են տարատեսակ ռազմավարություններ: Նրանք օգտագործում են այնպիսի ավանդական մարտավարություններ, ինչպիսիք են լոբբինգը, խնդրագ-

րերի կազմակերպում, հայցերի ներկայացում, ստորագրահավաք, տեղական համայնքի ճայնի բարձրացում: Բազմաթիվ տեղական խմբեր, գիտակցելով մեկուսացված գործելու սահմանափակումները, համագործակցության եզրեր են հաստատել այլ ժողովրդական խմբերի հետ:

Խմբերի մեծ կոալիցիան ենթադրում է տեղական բնապահպանական խմբերի միջև կոալիցիաների և համագործակցության ձևավորում:

Բնապահպանական բողոքի ցույցեր

Դելա Պորտայի և Դիանիի (2006) համաձայն՝ քաղաքականություն մշակող մարմիններին վրա ազդելու նպատակով բնապահպանական բողոքի ցույցերի ժամանակ կարող են ներգրավվել ոչ ավանդական և անուղղակի գործողությունների տարատեսակներ:

1. Տրամաբանական չափ (ներկայացնել կառավարության և ընդհանուր հանրության աջակցության չափը),
2. Տրամաբանական վնաս (հասցնել նյութական վնաս բիզնեսին կամ կառավարությանը),
 - ա. Տնտեսական պատժամիջոցներ (սպառողական բոյկոտ)
 - բ. Տնտեսական պառակտում (հսկողության անվտանգության ծախսեր)
 - գ. Բռնություն սեփականության նկատմամբ («էկոտաժ», կազմակերպությունների և կառավարության համակարգչային ցանցերի վնասում)
 - դ. Վկա հանդիսանալու տրամաբանությունը (ակտիվիստները դիմում են անձնական ռիսկերի սեփական համոզմունքների ազդեցիկությունը ցույց տալու նպատակով)

Բնապահպանական ճնշող խմբերի ազդեցության տեսակները (Carter 2007)

- Արտաքին
 - ✱ Ազդեցություն ինքնության վրա – խմբի աջակիցների բևեռացում
- Ներքին
 - ✱ Զգայուն դարձնելով ազդեցությունը – քաղաքական օրակարգի և հասարակական վերաբերմունքի փոփոխությունները
 - ✱ Իրավական գործընթացների ազդեցություն – որոշում կայացնող մարմինների հետ համագործակցություն
 - ✱ Կառուցողական աղեցություն – օրենսդրական կամ դաշինք ենթադրող կառույցների փոփոխություն (օրինակ, բնապահպանական գործակալության ստեղծում կամ քաղաքական կուսակցությունների վերաբերմունքի փոփոխություն)
 - ✱ Էական ազդեցություն – նյութական արդյունքներ, ինչպես, օրինակ, ատոմակայանի կամ աղտոտման նոր օրենսդրության վերացում:

Շարժման մասնակիցների համագործակցությունը

Հայաստանի դեպքում գործնականում ակտիվիզմի գործընթացի մասնակիցների միջև չի գրանցվել հաջող բանակցության օրինակ: Կառավարական (որոշում կայացնող) մարմինները նշում են, որ ակտիվիստների կողմից կազմակերպված բողոքի ցույցերը հիմն-

ված չեն իրական փաստերի վրա: Շատ ցույցեր, փաստորեն, չունեն գիտական հիմնավորվածություն: Մյուս կողմից, պետական մարմինները ներկայացնում են իրենց որոշումները ենթադրյալ գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա: Այս դեպքում նրանք գնահատում և աջակցում են կոմերցիոն բնույթի դեպքերը: Օրինակ, 2012 թվ-ի գարնանը որոշում կայացվեց գյուղատնտեսական նպատակներից ելնելով ժամանակավորապես ավելացնել Սևանա լճի ջրի արտահոսքը, քանի որ գարնանը սպասվում էր երաշտ: Ամառը չորային չէր, և ջրի երկրորդ արտահոսքի ավելացումը տեղի ունեցավ 2012թվ-ի օգոստոսին, որը բացարձակապես անիմաստ էր: Մյուս կողմից կոռուպացված է նաև ջրային ռեսուրսների կառավարման համակարգը, որում ներգրավված են քաղաքականապես և ֆինանսապես հզոր անդամներ: Պետական մարմինների կողմից կայացված որոշումը հիմնվել է Ջրային Ռեսուրսների Կառավարման Գործակալության տրամադրած տեղեկատվության և Հայպետհիդրոմետի ներկայացրած թույլ փաստարկների վրա: Այսպիսով, երկրում բնապահպանական կազմակերպությունների աջակցությունը ահռելի դեր է խաղացել բնապահպանական շարժման գործընթացում:

Գիտության դերը բնապահպանական ակտիվիզմում

Խորհրդային Միության փլուզումից առաջ գոյություն է ունեցել ուսումնասիրության կենտրոնների ցանց, որոնք հազեցած են եղել համապատասխան գիտական և տեխնիկական ռեսուրսներով (ինչպես Հայաստանի, այնպես էլ Խորհրդային Միության հաստատությունների միջև): Անկախությունից ի վեր այդ բոլոր կապերը վերացել են:

Ներկայումս բնապահպանական խնդիրների գիտական հետազոտությունը պետական մակարդակում իրականացվում է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) և ՀՀ Բնապահպանության նախարարությանը կից Շրջակա Միջավայրի վրա Ներգործության Մոնիտորինգի Կենտրոնի կողմից: ԳԱԱ-ն և Մոնիտորինգի կենտրոնը համարվում են ՀՀ կառավարության հիմնական գիտական խորհրդատուները: Նրանք ապահովում են բնական պայմանների, ազդեցության և արդյունքների հետազոտությունը, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված հետևանքների կանխագուշակումը: Կառավարության կողմից կայացված որոշումները հիմնականում հիմնվում են այս կառույցների կողմից տրամադրված արդյունքների վրա: Ինչպես Սևանա լճի դեպքում, բնապահպանական կազմակերպությունների կողմից շարունակական ճնշման ներքո այս պետական կազմակերպությունը դրական արձագանք տվեց ջրի մակարդակի բարձրացման ծրագրին: Ներկայումս Շրջակա Միջավայրի վրա Ներգործության Մոնիտորինգի Կենտրոնն է ուսումնասիրում լճի և նրան հարակից գետերի ջրերը: Այսպիսի հետազոտության արդյունքները տեղադրվում են ՀՀ Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am): Ինչպես ենթադրվում է, այս արդյունքները պարբերաբար քննադատվում են բնապահպանական շարժման ընդդիմադիր մասնակիցների կողմից: Այս բնապահպանական հակամարտության հիմքում ընկած է շրջակա միջավայրի պահպանության նպատակը հետապնդող կազմակերպությունների և կառավարության (որոշում կայացնող մարմիններ) միջև բանակցությունների բացակայությունը: Այս դեպքում կառավարությունը գլխավորապես կենտրոնացած է այն գործընթացների վրա, որոնք կարող են ապահովել եկամուտ մի քանի անհատների համար կամ կառավարական եկամտի միջոցով ֆինանսական հոսք գրանցել դեպի ազգային բյուջե:

Վերջին դեպքը, որը վեր է հանում կայացված բնապահպանական որոշումների թերությունները, վերաբերում է «Խոսքովի անտառ պետական արգելոց» ՊՈԱԿ-ի նոր տնօրենի նշանակմանը: Պաշտոնի զբաղեցման համար կազմակերպվեց անհեթեթ մրցույթ, որի արդյունքում նշանակվեց համապատասխան կրթություն և աշխատանքային փորձ չունեցող մի անձ: Համաձայնեցված ջանքերի և կառավարության որոշումների վրա միասնական ճնշման օրինակ է հանդիսանում World Wildlife Federation (WWF) և CNF-ի կողմից արված հայտարարությունը, ըստ որի իրենք դադարեցնելու են պետական արգելոցի հետագա ֆինանսավորումը: Այս կազմակերպությունները հանդիսանում են ներքին ֆինանսավորման աղբյուրները, որոնք այժմ դադարեցրել են Խոսքովի անտառ պետական արգելոցի ներդրումները:

Քաղաքականորեն ընդունված է համարել, որ, եթե որևէ անհատ կամ կազմակերպություն չի արտահայտվում շրջակա միջավայրի որոշակի խնդրին դեմ, ապա նրանք համարվում են տվյալ դեպքի պասիվ աջակիցները: Հենց այս գործոնն է բնութագրում բազմաթիվ բնապահպանական կազմակերպությունների վարքագիծը, որոնք հանգստություն են ցուցաբերում բնապահպանական շարժումների գազաթնակետերում: Այլ կերպ ասած, պետական մարմինները ոչ աջակցում են կործանիչ գործողություններին և ոչ էլ բնապահպանական շարժումներին: Օրինակ, Հայաստանում բազմաթիվ բնապահպանական կազմակերպություններ իրենց ամբողջ գործունեությամբ հանդերձ չունեն որոշակի ներդրում ոչ բնապահպանական շարժումներում և ոչ էլ բնապահպանական խնդիրների լուծման ինստիտուցիոնալացման ոլորտում: Կազմակերպությունները պարզապես հետևում են գիտական հոդվածներ և հետազոտություն իրականացնելու իրենց առաքելությանը: Մյուս կողմից դրանք կարող են լավ հնարավորություններ ընձեռել բնապահպանական ոլորտի մասնագետներ դառնալու համար՝ տրամադրելով գիտական փորձ և ուսուցում, ինչն էլ իր հերթին կարող է անուղղակի ներդրում հանդիսանալ բնապահպանական շարժումներում:

Պետության դերը բնապահպանական հարցերում

Որպեսզի ավելի հասկանալի լինի, թե բնապահպանական շարժումն ինչպես կարող է դրվել ինստիտուցիոնալ հիմքերի վրա, անհրաժեշտ է ունենալ Հայաստանի բնապահպանական կառավարման ընդհանուր պատկերը. ինստիտուցիոնալ և օրենսդրական շրջանակները, բնապահպանական քաղաքականությունը, պետության տրամադրության տակ առկա կարգավորիչ գործիքները և որոշումների ընդունման գործընթացին հանրության մասնակցության աստիճանը:

Ինստիտուցիոնալ շրջանակ

ՀՀ պետական կառավարման համակարգը բաղկացած է օրենսդիր իշխանությունից (Ազգային ժողով); գործադիր իշխանությունից (նախագահ, կառավարության աշխատակազմ, նախարարություններ և մարզպետարաններ); տեղական ինքնակառավարման մարմիններից և դատական ճյուղից (դատարաններ և գլխավոր դատախազի գրասենյակ):

ՀՀ բնապահպանության նախարարությունը որպես առանձին նախարարություն

ստեղծվել է 1991թ. անկախացումից հետո: Բնապահպանության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների խելամիտ օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության մշակման և իրականացման համար:

Ընդհանուր առմամբ, աշխարհում առաջին բնապահպանության նախարարությունները ձևավորվել են 1970-ական թթ.՝ Նորվեգիայում, Դանիայում, Հոլանդիայում, Ավստրիայում և Մեծ Բրիտանիայում: Ըստ Carter-ի (2007)՝ կան բնապահպանության նախարարությունների 2 մոդելներ.

- **«Բացառապես բնապահպանական իրավասության» մոդել:** Այս դեպքում նախարարությունը ունի հստակ, սակայն նեղ քաղաքական ուղղվածություն. այն փոքր, անկարևոր պետական մարմին է կառավարության կազմում՝ ոչ ազդեցիկ ծայնով: Տվյալ մոդելին պատկանող նախարարությունները սովորաբար շատ բնապահպանական խնդիրների հետ կապված ունենում են փոքր կամ ոչ մի ազդեցության հնարավորություն, քանի որ այդ խնդիրները այլ նախարարությունների իրավասության ներքո են (ինչպես օրինակ՝ տրանսպորտային և գյուղատնտեսական քաղաքականությունը): Այդ տիպի նախարարությունների ֆինանսական միջոցները ևս խիստ սահմանափակ են. դրանք սովորաբար ունենում են փոքր բյուջե (Ֆրանսիա, Գերմանիա)
- **«Ընդհանրական բնապահպանության նախարարության» մոդել,** որը ներառում է մի շարք բնապահպանական և ոչ բնապահպանական գործառույթների համախումբ մեկ պետական մարմնի ներքո: Տվյալ դեպքում նախարարության գործառույթները ներառում են շրջակա միջավայրի պահպանությանը քիչ թե շատ առնչվող այլ պետական մարմինների իրավասություններ ևս, ինչպես օրինակ՝ բնակարանային ապահովման (Շվեդիա, Հոլանդիա, Ֆինլանդիա), տեղական ինքնակառավարման (Իռլանդիա), գյուղատնտեսական հարցերի (Ավստրիա, Մեծ Բրիտանիա), ժառանգության (Ավստրալիա, Իռլանդիա) և սննդի անվտանգության (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա) պորտֆելներ: Այդ տիպի նախարարությունները մեծ ազդեցություն ունեն կառավարության կազմում:

ՀՀ բնապահպանության նախարարությունը պատկանում է առաջին մոդելին: Բնապահպանական կառավարման համակարգը Հայաստանում կարող է բնութագրվել իբրև ուժեղ հորիզոնական կառավարման կառուցվածք, որտեղ տարածքային մարմինները ունեն սահմանափակ լիազորություններ: Նախարարությունը մասամբ է լուծել հորիզոնական կոորդինացման խնդիրները:

Նշանակալից տարանջատում է առկա Հայաստանի բնապահպանական կառավարման մեջ՝ վերը նշված կառուցվածքի և տեխնիկական կարողությունների ու ֆինանսական միջոցների աղության հետևանքով: Չնայած սովորաբար տեղի է ունենում ժամանակի հետ գործառույթների համատեղում, սակայն տարանջատման որոշակի մակարդակ միշտ առկա է լինում: Անգամ միավորելով գործառույթների լայն շրջանակ (նախկինում այլ պետական մարմինների կողմից իրականացվող)՝ շատ բնապահպանական գործառույթներ մնում են Բնապահպանության նախարարության լիազորությունից դուրս: Օրինակ, հանքարդյունաբերության բնագավառում որոշակի գործառույթներ պատվիրակված են Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, ջրային կառավարման ոլորտում՝ Տարածքային կառավարման նախարարությանը:

Իր ստեղծման օրվանից Բնապահապանության նախարարությունը գտնվում է մշտական վերակազմավորման գործընթացներում: Դա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ գոյություն ունի գործառույթների կրկնություն ինչպես նախարարության ստորաբաժանումների, այնպես էլ Բնապահապանության նախարարության և այլ նախարարությունների միջև: Հարկ է նշել, որ Բնապահապանության նախարարությունն ունի ինչպես գործադիր, այնպես էլ վերահսկողական գործառույթներ:

Բնապահապանության նախարարությունը իր գործառույթներն իրականացնում է մի շարք ստորաբաժանումների և կազմակերպությունների միջոցով: Նախարարության աշխատակազմի կառուցվածքի մեջ ընդգրկված են մի շարք կառուցվածքային միավորներ (օրինակ՝ վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված միավորներ (օրինակ՝ գործակալություններ, տեսչություն):

Կառուցվածքային ստորաբաժանումները պատասխանատու են նախարարության քաղաքականության մշակման համար, իսկ առանձնացված ստորաբաժանումները պատասխանատու են այդ քաղաքականության իրականացման համար: Գործակալությունները մատուցում են նաև ծառայություններ, իսկ տեսչությունն իրականացնում է պետական վերահսկողություն համապատասխան ոլորտներում:

Բնապահապանության նախարարությունը ունի նաև 4 վարչություններ (Բնապահպանական - ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչություն, Ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչություն, Իրավաբանական վարչություն, Քարտուղարություն) և 12 ինքնուրույն բաժիններ (Կենսաբազմազանության քաղաքականության բաժին, Ջրային ռեսուրսների քաղաքականության բաժին, Մթնոլորտային օդի քաղաքականության բաժին, Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժին, Ներքին աուդիտի բաժին, Գնումների գործընթացի իրականացման բաժին, Արտաքին կապերի բաժին, Հասարակայնության հետ կապերի բաժին, Անձնակազմի կառավարման բաժին, Ֆինանսահաշվապահական բաժին, Տնտեսական բաժին, Առաջին բաժին):

Նախարարության առանձնացված ստորաբաժանումներն են՝ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունը, Կենսառեսուրսների կառավարման գործակալությունը և Բնապահպանական պետական տեսչությունը:

Բնության հատուկ պահպանվող տարածքները գտնվում են նախարարության կազմում ՊՈԱԿ-ների տեսքով («Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ, «Արփիլիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, «Շիկահողի պետական արգելոց» ՊՈԱԿ, «Արևիկ» Ազգային պարկ» ՊՈԱԿ): 2004թ. «Հայաստան» ՊՓԲԸ, որը պատասխանատու է Հայաստանի անտառների կառավարման համար Բնապահապանության նախարարությունից տեղափոխվեց Գյուղատնտեսության նախարարություն: Ինչևէ, Բնապահապանությանը վերապահված են անտառների վերահսկողության գործառույթները:

Նախարարության կազմում կան նաև մի շարք այլ ՊՈԱԿ-ներ՝ «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ, «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ, «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ, «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ, «Շրջակա միջավայրի վրա ներ-

գործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ և «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ:

Բնապահպանական պետական տեսչությունը համարվում է բնապահպանական հիմնական հարկադրող մարմինը և պատասխանատու է բնական ռեսուրսների օգտագործման, մթնոլորտային օդի պահպանման և այլ բնապահպանական ազդեցությունների նկատմամբ պահանջների համապատասխանության ստուգման և ապահովման համար (OECD 2005): Տեսչությունը նաև վերահսկում է ձեռնարկությունների և համայնքային պատկանելության մաքրման կայանները: Բնապահպանական պետական փորձաքննության դեպքում տեսչությունը իրականացնում է վերահսկողություն բնապահպանական պետական փորձաքննական եզրակացության առկայության և փորձաքննության ենթարկված փաստաթղթերում ամրագրված բնապահպանական պահանջների ու միջոցառումների իրականացման նկատմամբ: Տեսչությունն ունի 11 տարածքային բաժիններ, իսկ գլխամասը տեղակայված է Երևանում:

Տեսչությունը օրենքների խախտումներ արձանագրելու դեպքում կարող է ձեռնարկել ճշգրտող միջոցառումներ, ինչպես օրինակ՝ տույժերի, վնասի փոխհատուցման կիրառում, և գործի փոխանցում դատախազությանը:

«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննություն և փորձաքննական եզրակացությունը սահմանված կարգով ներկայացնում է բնապահպանության նախարարի հաստատմանը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա:

«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ֆինանսավորվում է բնապահպանական ազդեցության գնահատում իրականացնելու նախաձեռնողների վճարումներից:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը և գործադիր մարմինը (տնօրեն): ՊՈԱԿ-ի հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հիմնադիրը ունի բացառիկ լիազորություններ կազմակերպության կառավարման համակարգի սահմանման, կազմակերպության վերակազմակերպման և լուծարման նկատմամբ: «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի (ինչպես նաև նախարարության կազմում ընդգրկված ցանկացած ՊՈԱԿ-ի) հիմնադիր է հանդիսանում Բնապահպանության նախարարությունը, հետևաբար ՊՈԱԿ-ը մեծապես կախված է նախարարությունից, չի կարող ընդունել անկախ որոշումներ և օժանդակում է նախարարությանը նրա քաղաքականության իրականացման գործընթացում:

Առողջապահության, Քաղաքաշինության, Արտակարգ իրավիճակների, Գյուղատնտեսության և մի շարք այլ պետական մարմիններ ունեն պարտականություններ բնապահպանական կառավարման գործում:

Օրենսդրական շրջանակ

ՀՀ Սահմանադրության (ընդունված 1995թ.) 10-րդ հոդվածի համաձայն պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

1991թ. անկախության ձեռքբերումից հետո բնապահպանության ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ են ընդունվել: Դրանց մեծ մասը որպես Հայաստանի օրենսդրական և քաղաքական իրականության արագ փոփոխությունների արդյունքում հնացել են: Առկա է բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման հրատապ պահանջ՝ կենտրոնանալով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, սահմանափակումներ ստեղծելու համար իրատեսական հիմնավորումների համար անհրաժեշտ կանոնների և ստանդարտների, ինչպես նաև հանրության արդյունավետ մասնակցության ապահովման վրա:

Այսօր բնապահպանական և հարակից ոլորտները կարգավորող 4 օրենսգրքեր և 22 օրենքներ են ընդունվել.

1. Հողային օրենսգիրք (1991թ., թարմացված 2001թ.)
2. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք (1991թ., թարմացված 2006թ.)
3. Ընդերքի մասին օրենսգիրք (1992թ., թարմացված 2011թ.)
4. Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք (1994թ.)
5. Անտառային օրենսգիրք (1994թ., թարմացված 2005թ.)
6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենք (1995թ.)
7. Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին օրենք (1998թ.)
8. Բուսական աշխարհի մասին օրենք (1999թ.)
9. Կենդանական աշխարհի մասին օրենք (2000թ.)
10. Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին օրենք (2000թ., թարմացված 2006թ.)
11. Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին օրենք (2001թ.)
12. Հիդրոոգերնութաբանական գործունեության մասին օրենք (2001թ.)
13. Սևանա լճի մասին օրենք (2001թ.)
14. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիրը հաստատելու մասին օրենք (2001թ.)
15. Բնապահպանական կրթության մասին օրենք (2001թ.)
16. Ջրային օրենսգիրք (1992թ., թարմացված 2002թ.)
17. Մեյսմիկ պաշտպանության մասին օրենք (2002թ.)
18. Թափոնների մասին օրենք (2004թ.)
19. Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005թ.)
20. Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին օրենք (2005թ.)
21. Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին (2005թ.)
22. Ջրի ազգային ծրագրի մասին օրենք (2006թ.)

23. Օգոստյին շերտը քայքայող նյութերի մասին օրենք (2006թ.)
24. Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին (2006թ.)
25. Որսի և որսորդական տնտեսության վարման մասին (2007թ.)
26. Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին օրենք (2008թ.)

Վերոհիշյալ օրենքների կիրարկումն ապահովող ավելի քան 1000 ենթասթյուգական ակտեր են ընդունվել: Ի լրումն ուղղակիորեն բնապահպանությանն առնչվող օրենսդրության, այդ ոլորտը կարգավորվում է նաև Քաղաքացիական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ և Քրեական օրենսգրքերով:

Բնապահպանական քաղաքականություն

Ռազմավարական փաստաթղթեր

Բնապահպանական քաղաքականության վերաբերյալ գոյություն ունեն Կառավարության կողմից ընդունված մի շարք ռազմավարական փաստաթղթեր:

Կայուն զարգացման ծրագիրը (ԿԶԾ) Կառավարության կողմից հաստատվել է 2008թ: ԿԶԾ ռազմավարությունը բաղկացած է երեք հիմնական գերակա ուղղություններից՝ կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովում, ակտիվ և բնակչության խոցելի խմբերին ուղղված նպատակային սոցիալական և եկամտային քաղաքականության իրականացում և երկրի կառավարման համակարգի արդիականացում՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության բարձրացում և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովում: Միաժամանակ նշված գերակայությունների իրացման գործընթացը պետք է զուգակցվեր շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների կայուն կառավարման խնդիրների լուծմամբ:

2008թ. կառավարության կողմից ընդունվել է Հայաստանի Հանրապետության **Շրջակա Միջավայրի Պահպանության Գործողությունների Երկրորդ Ազգային Ծրագիրը (ՇՄԳԱՄԾ-2)**, որը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության ներքո՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ: ՇՄԳԱՄԾ-2-ը հիմնված է ՇՄԳԱՄԾ-1 (1998թ) իրականացման գնահատման վրա: ՇՄԳԱՄԾ-2 բնապահպանական ռազմավարական գործողությունների նոր սերնդի ծրագիր է: Ծրագիրն անդրադառնում է ինչպես բնապահպանական բնագավառներին՝ հող, կենսառեսուրսներ, ջուր, ընդերք, վնասակար նյութեր և թափոններ, այնպես էլ միջբնագավառային հարցերին՝ բնապահպանության տնտեսագիտություն, բնապահպանական օրենսդրություն, ինստիտուցիոնալ հարցեր, բնապահպանական մոնիտորինգ, բնապահպանական վերահսկողություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, միջազգային համագործակցություն, բնապահպանական կրթություն, իրազեկում, բնապահպանական հետազոտություններ: Ծրագիրը նաև ուշադրություն է դարձնում միջոլորտային հարցերին, ինչպիսիք են էներգետիկա, արդյունաբերություն, տրանսպորտ, գյուղատնտեսություն և առողջապահություն:

Կան նաև բնապահպանությանը վերաբերող մի շարք այլ ռազմավարական փաստաթղթեր. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (2003), Ավտո-

տրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման հաշվեցակարգ (2004), Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարություն (2005), Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (2006), Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր (2007) և Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի գործողությունների ծրագիր (2010):

Խորհուրդներ

Կայուն զարգացման սկզբունքները ավելի լավ իրագործելու համար Կառավարությունը նախաձեռնել է համակարգման փորձեր կոմիտեների և աշխատանքային խմբերի տեսքով: Խորհուրդների նպատակն է՝ համակարգել և ինստիտուցիոնալ տեսք հաղորդել բնապահպանական նկատառումների պետական մարմինների կողմից ամենօրյա որոշումների ընդունման գործընթացին: Կառավարության ներքո գոյություն ունեն հետևյալ խորհուրդները.

- **Կայուն զարգացման ազգային խորհուրդը** ստեղծվել է 2002թ. Կայուն զարգացմանը միտված ծրագրերի մշակումն ապահովելու համար, ինչպես նաև խթանելու հանրային մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին կայուն զարգացման ոլորտում: Խորհուրդը ռազմավարական որոշումներ կայացնող մարմին է, որում ընդգրկված են պետական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներ՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: Խորհուրդը բաղկացած է ՀՀ փոխվարչապետից (ՀՀ տարածքային կառավարման նախարար), մի շարք այլ նախարարներից (Էկոնոմիկայի նախարար, Գյուղատնտեսության նախարար, Կրթության և գիտության նախարար, Բնապահպանության նախարար, Առողջապահության նախարար, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Էներգետիկայի և բնական պաշարների նախարար և այլն), ԱԺ ներկայացուցիչներից, ԳԱԱ նախագահից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Կազմված է ԿԶԾ աշխատանքային խումբ, որն իրականացնում է ծրագրի ընթացիկ աշխատանքների կառավարումը: Աշխատանքային խումբը ղեկավարում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալը:
- **Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամը** ստեղծվել է 2004թ.՝ հանրապետության անտառների վերականգնման գործընթացին աջակցելու և անտառների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով: Հիմնադրամի կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և հիմնադրամի կառավարիչը՝ գործադիր տնօրենը: Հոգաբարձուների խորհուրդը նախագահում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված են փոխվարչապետը, տարածքային կառավարման նախարարը, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարները, ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահը, Երևանի քաղաքապետը, Արագածոտնի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռու մարզպետները, քաղաքաշինության, գյուղատնտեսության նախարարների տեղակալները, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Կանաչագարդ երկիր» հասարակական կազմակերպության նախագահը, Հայաստանի գրողների միության անդամներից մեկը, Կանաչների միության նախագահը, Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի նախագահը:

- **Ջրի ազգային խորհուրդը** ստեղծվել է 2002թ. որպես ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրին ու բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհուրդը նախագահում է վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված են փոխվարչապետը, տարածքային կառավարման նախարարը, գյուղատնտեսության, բնապահպանության, քաղաքաշինության նախարարները, բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի նախագահը, տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահը, բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետը, տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ջրատնտեսական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող վարչության պետը, անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտորը և այլն: Խորհուրդն ունի քարտուղարություն և իր կազմից ընտրում է խորհրդի քարտուղար:

Անհրաժեշտ է նկատել, որ նշված խորհուրդներն ունեն սահմանափակ ազդեցություն: Քիչ ապացույցներ կան, որ պետական մարմինները ներառել են կայուն զարգացման սկզբունքները իրենց ամենօրյա գործունեության/բոլոր գործընթացների մեջ: Առկա է բնապահպանական քաղաքականության միջգերատեսչական ինտեգրման սահմանափակ բարելավում, քանի որ պետական մարմինները քիչ մասնակցություն են դրսևորում կայուն զարգացման օրակարգին: Դրա պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ կան շատ ծրագրեր, սակայն առկա է համակարգման պակաս այդ ծրագրերի միջև:

Որոշ երկրներում բարեփոխումների ընթացքը ունի ավելի խոր արմատներ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում Կայուն զարգացման հանձնաժողովի շրջանակներում խորհրդատվական խմբեր և կլոր սեղաններ են նախաձեռնվել՝ ներառելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների որպես «անկախ պահապան շուն» (“independent watchdog”), ովքեր անմիջականորեն հաշվետու են վարչապետին:

Մասնակցություն միջազգային բնապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի միջազգային համագործակցությունը բնապահպանության բնագավառում սկսվել է 1992թ. Կայուն զարգացման Ռիո դե Ժանեյրոյի գազաթնաժողովից, որտեղ Հայաստանը առաջին անգամ ներկայացավ որպես անկախ պետություն: Այդ գազաթնաժողովի ընթացքում Հայաստանը ստորագրեց իր առաջին երկու բնապահպանական կոնվենցիաները՝ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա և Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիա:

Հետագայում Հայաստանը միացավ մի շարք բնապահպանական կոնվենցիաների: Ներկայումս, Հայաստանի կողմից ստորագրվել և Հայաստանում ուժի մեջ են մտել մի շարք կոնվենցիաներ և արձանագրություններ (Աղյուսակ 1):

Ի լրումն վերոհիշյալ կոնվենցիաներում մասնակցության՝ Հայաստանը անդամ է և մասնակցում է տարբեր միջազգային կազմակերպությունների ծրագրերի, ինչպես նաև

ծրագրեր է իրականացնում ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի կառույցների, համագործակցում է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ (Գլոբալ էկոլոգիական ֆոնդ և Համաշխարհային բանկ) (MNP 2003):

Աղյուսակ 2. Հայաստանի մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին

Անվանում, ընդունման վայր և տարեթիվ

**Ուժի մեջ է
ՀՀ համար**

Գլոբալ կոնվենցիաներ	
1 «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսարի կոնվենցիա)	1993թ.
2 ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո, 1992)	14.05.1993թ.
Կարտագենյան արձանագրություն (Մոնրեալ, 2001)	29.07.1993թ.
3 ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու-Յորք, 1992)	21.03.1994թ.
Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 10.12.1997թ.)	16.02.2005թ.
4 ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994)	30.09.1997թ.
5 «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 22.03.1985թ.)	01.10.1999թ.
«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալի արձանագրություն) (Մոնրեալ, 1987)	01.10.1999թ.
Մոնրեալի արձանագրության Լոնդոնյան ուղղում	26.11.2003թ.
Մոնրեալի արձանագրության Կոպենհագենի ուղղում	26.11.2003թ.
Մոնրեալի արձանագրության Պեկինյան ուղղում	18.03.2009թ.
Մոնրեալի արձանագրության Մոնրեալի ուղղում	18.03.2009թ.
6 ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազելի կոնվենցիա) (Բազել, 1989)	01.10.1999
7 «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամի կոնվենցիա) (Ռոտերդամ, 1998)	26.11.2003թ.
8 «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմի կոնվենցիա) (Ստոկհոլմ, 2001)	17.05.2004թ.
9 «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն, 1979)	21.01.2009թ.
10 «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 16.11.1972)	1993թ.
11 «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոն, 1979)	01.03.2011թ.

Տարածաշրջանային կոնվենցիաներ		
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979)	21.02.1997թ.
	«Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրություն	Վավերացման փուլում է
13	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպոյի կոնվենցիա, 1991)	10.09.1997թ.
	«Ռեգիոնալ արևելա-արևմտյան եվրոպական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003)	24.04.2011թ.
14	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992)	21.02.1997թ.
15	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա) (Օրիուս, 1998)	01.08.2001թ.
16	ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Հելսինկի, 17.03.1992թ.)	
	«Ջրի կառողջության մասին» արձանագրություն (Լոնդոն, 17.06.1999թ.)	Վավերացման փուլում է
17	«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (Ժնև, 10.12.1976թ.)	15.05.2002թ.
18	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2003)	01.07.2004թ.
19	«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռնի կոնվենցիա) (Բեռն, 1979)	01.08.2008թ.

Աղբյուր. MNP 2012

Բնապահպանական քաղաքականության գործիքներ՝ միարված բնապահպանական քաղաքականության իրագործմանը

Քաղաքականության մշակման և իրագործման ընթացքում կարևորագույն խնդիրը քաղաքականության ճիշտ գործիքի՝ լծակի ընտրությունն է, որի միջոցով կառավարությունը ձգտում է հասնել քաղաքականության նպատակներին: Քաղաքականության գործիքները պետք է լինեն իրատեսական, արդյունավետ և ունենան դաստիարակչական բնույթ՝ փորձելով ազդել թիրախային խմբերի վարքագծի վրա՝ հայտարարված քաղաքականության նպատակներին հասնելու և հասարակության շրջանում բնապահպանական արժեքները տարածելու համար (Carter 2007):

Կառավարության լիազորության շրջանակներում/տրամադրության տակ առկա են քաղաքականության գործիքների հետևյալ 4 տեսակներ.

1. կարգավորում,

2. կամավորական գործողություն,
3. պետական ծախսեր,
4. շուկայական գործիքներ:

Գլխավոր խնդիրը գործիքների լայն շրջանակից համապատասխան գործիքի ընտրությունն է՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:

Կարգավորումը բնապահպանական քաղաքականության մեջ լայնորեն կիրառվող գործիք է: Այն փորձում է ազդել գործարարների և քաղաքացիների վարքագծի վրա: Կառավարությունը սահմանում է ստանդարտներ կամ չափորոշիչներ արտանետումների վերահսկողության համար, որին պետք է բավարարի որոշակի գործընթաց, իսկ ստանդարտների պահպանումն ապահովելու համար պետք է ներգրավի պետական պաշտոնյաներին, օժանդակի այն իր օրենսդրական համակարգով: Կարգավորիչ ստանդարտները լինում են 3 տեսակի.

1. *Շրջակա միջավայրի սրանդարտները* դնում են սահմանափակումներ արտանետումների ամբողջական կոնցենտրացիայի համար՝ թույլատրելի որոշակի տարածքում (օրինակ՝ փողոց, գետ)
2. *Արտանետման սրանդարտները* դնում են սահմանափակումներ արտանետումների կոնկրետ աղբյուրի վրա (օրինակ՝ գազեր գործարաններից, արտանետումներ ավտոմեքենաներից)
3. *Նախագծման սրանդարտները* պահանջում են որոշակի տեսակի աղտոտիչների վերահսկման տեխնոլոգիայի կամ արտադրության գործընթացի օգտագործում (օրինակ՝ որոշակի նյութերի օգտագործում արտադրանքի մեջ):

Կարգավորման առավելությունն այն է, որ այս եղանակն առաջարկում է ճշգրտություն, կանխատեսելիություն և արդյունավետություն: Սահմանված է որոշակի ստանդարտ. թե կարգավորող մարմինը և թե կարգավորման ենթարկվողը գիտեն, թե իրենցից ինչ է ակնկալվում, իսկ կիրարկումն ապահովվում է օրենքով սահմանված կարգավորիչ մարմինի կողմից:

Չնայած կարգավորումն ունի մի շարք առավելություններ, այն նաև ունի որոշակի թերություններ: Պետական մարմինը պատասխանատու է մոնիտորինգի, համապատասխանության ստուգման և կիրարկման համար: Այս գործողությունների իրականացումը թանկ և ժամանակատար է. առաջանում են նշված գործողությունների ֆինանսավորման պրոբլեմներ՝ ողջ ծավալով և ճիշտ ձևով իրականացնելու համար: Պատվիրակված գործառույթները իրականացնելու ընթացքում կարող է լինել նաև վարչական անկարողություն:

Կամավորական գործողությունը ներառում է անհատների և կազմակերպությունների, որոնք գործում են ի պաշտպանություն շրջակա միջավայրի՝ առանց օրենսդրությամբ ներկայացված պահանջի և առանց պետության կողմից ֆինանսական խթանման: Գործարարները կարող են վերանայել իրենց գործունեությամբ պայմանավորված բնապահպանական ազդեցությունը: Որոշ ընկերություններ ներդնում են Էկո-մենեջմենթի և աուդիտի պլաններ, բնապահպանական կառավարման ստանդարտներ (օրինակ՝ ISO 14001) և էկո-պիտակավորում: Կա մեկ այլ գործիք, որը կոչվում է «կամավորական պայմանավորվածություն», որով կազմակերպությունները հանձն են առնում իրականացնել կամավորական գործողություններ: Այդ կազմակերպությունների նկատմամբ չեն կիրառվում պատժամիջոցներ՝ իրենց կողմից սահմանված պահանջները չբավարարելու համար:

Ըստ Jacobs-ի (1991)՝ **պետական ծախսերը** կարող են օժանդակել բնապահպանական նպատակներին հասնելուն, երբ ճշգրտող գործողությունների արժեքը շատ բարձր է առանձին արտադրողների կամ քաղաքացիների համար: Դա կարող է ձեռնարկությունների համար ունենալ սուբսիդիաների տեսք՝ մաքուր տեխնոլոգիաներ գնելու համար, գյուղացիների համար՝ փոխելու գյուղատնտեսության ինտենսիվ եղանակները, քաղաքացիների համար՝ իրենց տները ջերմամեկուսացնելու համար:

Շուկայական գործիքները «Աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառման միջոցով շուկայի ֆիասկոն կանխարգելելու նպատակ ունեն: Շուկայի ձախողումը տեղի է ունենում, երբ բնական ռեսուրսները գերշահագործվում են, քանի որ դրանց դեպքում շուկայական գինը չի ներառում բնական ռեսուրսների էքստերնալ ծախսերը:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքը նախատեսում է, որ ապրանքի կամ ծառայության գնի մեջ ներառվում են էքստերնալ ծախսեր՝ ցույց տալով արտադրանքի ամբողջական իրական արժեքը (ներառելով այնպիսի հասարակական ապրանքների օգտագործում, ինչպիսիք են օդը, ջուրը կամ հողը):

Շուկայական սկզբունքների վրա հիմնված գործիքները ունեն էկո-հարկերի և փոխսնակելի թույլտվությունների տեսք: Էկո-հարկերը գանձվում են արտանետումների ծավալից կամ այն ապրանքներից, որոնց արտադրությունը առաջացնում է շրջակա միջավայրի աղտոտում: Ի տարբերություն կարգավորող ստանդարտների՝ էկո-հարկերը ճկունություն են ապահովում և թույլ են տալիս արտադրողին որոշել, թե ինչպես է ձեռնարկությունը կրճատելու արտանետումների ծավալները: Փոխսնակելի թույլտվությունները բնապահպանական քվոտաներ են, որոնք կարող են գնվել և վաճառվել (օրինակ՝ երբ կառավարությունը սահմանում է քվոտաներ արտանետումների կամ ձկնորսության վրա):


Հայաստանում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքը կարգավորում է բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, վճարողների շրջանակը, վճարների տեսակները, ինչպես նաև հաշվարկման և վճարման կարգը: Օրենքը և օրենքի կիրարկումն ապահովող այլ օրենսդրական ակտերը նախատեսում են տնտեսական մեխանիզմներ շրջակա միջավայրի պահպանության նպատակով օգտագործողների համար հավասար պայմաններ ստեղծելու միջոցով, բնապահպանական միջոցառումներին ուղղված ֆինանսական միջոցներ ձևավորելու միջոցով, և վերահսկելով այն միջոցառումները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Օրենքը սահմանում է բնապահպանական վճարների հետևյալ տեսակները.

- Վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար;
- Արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար;
- Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: Օրենքը սահմանում է հետևյալ բնօգտագործման վճարի տեսակները.
- Զրօգտագործման համար;
- Օգտակար հանածոների արդյունահանված պաշարների համար;
- Կենսապաշարների օգտագործման համար:

2010թ. կազմակերպությունների բնապահպանական և բնօգտագործման վճարները կազմել են 4808.6 մլն. դրամ, որից 735.1 մլն. դրամը կամ 15.3%՝ բնապահպանական, իսկ 4073.5 մլն. դրամը կամ 84.7%՝ բնօգտագործման վճարներն են (NSS 2011):

Աղյուսակ 3. Բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշիռը (%-ով) ՀՀ համախառն ներքին արդյունքի նկատմամբ



Աղբյուր՝ MNP 2012

Բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշիռը (%-ով) ՀՀ համախառն ներքին արդյունքի նկատմամբ շարունակում է մնալ բավականին ցածր՝ հաշվի առնելով, որ այն բնորոշում է տնտեսության գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վնասի դիմաց գանձվող փոխհատուցման գումարների չափը: Հայաստանի նման զարգացման աստիճան ունեցող երկրներում տնտեսության գործունեության արդյունքում յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրին պատճառվում է 8-10 տոկոս ՀՆԱ-ին համապատասխանող վնաս, այսինքն՝ փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 32-40 անգամ (MNP 2012):

Հայաստանում չկան վիճակագրական վերլուծություններ բնապահպանական վճարների կիրառման արդյունավետության վերաբերյալ, թե արդյոք դրանք ստեղծում են տնտեսական խթաններ մաքուր տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելու տեսանկյունից: Ներկայումս համապատասխան ուսումնասիրություններ չեն կատարվել և բնական ռեսուրսների օգտագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասի իրական չափը գնահատված չէ: Հենց այդ պատճառով շրջակա միջավայրին հասցվող վնասի կրճատմանը միտված տնտեսական մեխանիզմները պակաս արդյունավետությամբ են աշխատում. վճարների դրույքները չեն համապատասխանում և համարժեք չեն իրական վնասի չափին: Բնօգտագործման վճարների դրույքների համեմատաբար ցածր մակարդակը թույլ չի տալիս կիրառել «Աղտոտողը վճարում է» սկզբունքը և բնական ռեսուրսների կայուն օգտագործմանն ուղղված կարգավորիչ գործիքները առավել քիչ արդյունավետությամբ են աշխատում: Ընկերությունները արտանետումների նվազեցմանն ուղղված և այդպիսով վճարների գումարը նվազեցնելուն միտված նոր ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու խթաններ չունեն: Կարելի է եզրակացնել, որ բնապահպանական և բնօգտագործման վճարները ընկերությունների ծախսերի տեսակարար կշիռում փոքր ծավալ են զբաղեցնում:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները ուղղվում են դեպի պետական բյուջե: Այդ վճարները թույլ են տալիս մեծացնել բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորումը: Հարկ է նկատել, որ սոցիալական խնդիրները հանդիսանում են առաջնահերթություն և բնապ-

ահպանական միջոցառումների համար ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հատկացում է: Հարաբերակցությունը պետական բյուջեի բնապահպանությանն ուղղված միջոցների և բյուջե մուտք գործող բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարների միջև ցույց են տալիս, որ կան լուրջ խոչընդոտներ բնապահպանական խնդիրների լուծման մեջ: Վճարները ամբողջովին չեն նախատեսվում բնապահպանական միջոցառումների ֆինանսավորմանը (MNP 2003):

Աղյուսակ 4. ՀՀ պետական բյուջե բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքագրված գումարներ

	2008թ.	2009թ.	2010թ.
ՀՀ պետական բյուջեով շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումներ (մլրդ. դրամ)	3.0	3.9	4.9
Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջե փաստացի մուտքագրված մուտքեր (մլրդ. դրամ) (աղբյուր՝ ՀՀ պետբյուջեի կատարման տարեկան հաշվետվություն)	6.12	9.97	9.10
Վճարների հասցեական օգտագործման ցուցանիշը (տոկոս)	49.0	39.1	53.8

Աղբյուր՝ MNP 2012

Սակայն պետք է փաստել, որ պետության ընդհանուր ֆինանսական աղբյուրների միջոցների սահմանափակության պայմաններում բյուջետային ծախսային գերակայություններում բնապահպանական միջոցառումները շարունակում են պակաս գերակա/առաջնային համարվել: Արդյունքում՝ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների վրա կատարվող ծախսերի ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների մասով ամենավերջին տեղերից մեկը (MNP 2012):

Սակայն պետական բյուջեից բնապահպանությանը տրված հատկացումները ցույց են տալիս դանդաղ աճի միտում: Այդ հատկացումներն ուղղվում են պահպանվող տարածքների ստեղծմանը և ընդարձակմանը, կենսաբազմազանության պաշտպանությանը, օդի աղտոտվածության վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը, անտառապատմանը, Սևանի ազգային պարկի, նախարարության աշխատակազմի աշխատավարձերին, ծրագրերի իրականացմանը, և այլն:

Աղյուսակ 5. ՀՀ պետական բյուջեի՝ շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը (% -ով)՝ ՀՀ համախառն ներքին արդյունքի նկատմամբ

	2008թ.	2009թ.	2010թ.
ՀՀ ՀՆԱ (մլրդ. դրամ)	3568.2	3102.8	3461.9
ՀՀ պետական բյուջեով շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումներ (մլրդ. դրամ)	3.0	3.9	4.9
ՀՀ պետական բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը (%-ով)՝ ՀՀ համախառն ներքին արդյունքի նկատմամբ	0.08	0.12	0.14

Աղբյուր՝ MNP 2012

Կամավորական համաձայնագրեր գործնականում չեն կիրառվում Հայաստանում: Առ այսօր կազմակերպությունների միջև նմանատիպ համաձայնագրեր չեն ստորագրվել: Ոչ մեծ թվով ընկերություններ ներդրել են ISO 14001 ստանդարտները, սակայն հարկ է նկատել, որ դա արվել է ավելի լավ համբավ ունենալու համար և իրականում բնապահպանական կառավարումը ներառված չէ կազմակերպությունների ամենօրյա գործունեության մեջ:

Ժողովրդավարություն և մասնակցություն

Ըստ WCED (2007)¹ միայն օրենքը չի կարող ապահովել հանրային շահի իրականացումը: Հանրային շահի իրականացման համար համայնքային գիտակցության և օժանդակության կարիք կա, որը հանգեցնում է առավել լայն հանրային մասնակցության² բնապահպանության վրա անմիջականորեն ազդող որոշումներում: Լայնորեն ընդունված է, որ ավելի լայն ժողովրդավարությունը կբարելավի ընդունվող որոշումների որակը:

Բնապահպանական որոշումների ընդունման գոնըրնթացում ավելի լայն ժողովրդավարություն ապահովող մի շարք գործիքներ են կիրառվում զարգացած պետություններում: **Հանրային հետաքննությունը** սովորաբար կիրառվում է, երբ առկա է հակասական նախագիծ: Հանրային հետաքննության նախագահողը լսում է շահերի լայն շրջանակ և հետաքրքրության տարբեր խմբերի ներկայացուցիչների վկայություններ: Կազմվում է հետաքննության զեկույց և որոշումն ընդունելուց առաջ տրվում է կառավարության համապատասխան մարմնի դիտարկմանը: Կան նաև մի շարք նոր գործիքներ՝ քաղաքացիական ժյուրի, կոնսենսուս կոնֆերանսներ և խորհրդատվական հարցումներ: Բոլոր նշված գործիքները ապահովում են քաղաքացիների մասնակցությունը «կանաչ ժողովրդավարության» սկզբունքների համատեքստում (Carter 2007):

Ինչևէ, անհրաժեշտ է նկատել, որ բոլոր այս ժողովրդավարական մեխանիզմները չեն ապահովել նպաստավոր արդյունքներ՝ բնապահպանության տեսանկյունից: Օրինակ՝ կարող է լինել կոնֆլիկտ տեղական համայնքի զարգացման տեսլականի և ընտրված կառավարության ռազմավարական զարգացման պլանների միջև: Գործարար շրջանակները ևս ունեն նշանակալից միջոցներ և կարող են մոբիլիզացնել դրանք՝ որոշումների ընդունման գործընթացին ներագդելու նպատակով:

Հայաստանում վերը նշված մեթոդներից և ոչ մեկը չի կիրառվում: Այնուամենայնիվ, բնապահպանական որոշումների ընդունման որոշ մակարդակներում առկա են հանրային մասնակցության տարրեր: Հասարակության մասնակցությունը արտահայտվում է Ազգային ժողովում օրենքների նախագծերի հանրային լսումների միջոցով (օրինակ, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքում փոփոխություններ, բնության հատուկ պահպանվող տարածքների օրենքի նախագծի մասին և այլն): Հանրային լսումների ընթացքում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են իրենց կարծիքները ու մտահոգությունները, և Բնապահպանության նախարարությունը պարտավոր է պատասխանել այդ առաջարկություններին՝ կամ ընդունելով դրանք կամ ներկայացնելով գրավոր բացատրություն նախագծի վերաբերյալ առաջարկների մերժման մասին: Այնուամենայնիվ, հասարակության կարծիքը և մտահոգությունները նախագծերում ներառելու որևէ սահմանված մեթոդոլոգիա կամ կարգ չկա: Ներկայումս, Բնապահպանության նախարարությունը մշակում է բնապահպանական քաղաքակա-

նության մասին օրենք, որում հասարակության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում կստանա իրավական ուժ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և անկախ փորձագետները պետական կառավարման մարմինների կողմից հիմնականում հրավիրվում են մասնակցելու միջազգային կոնվենցիաների հետ կապված ազգային զեկույցների և միջոցառումների նախապատրաստմանը: Այդ մասնակցությունը հիմնականում կրում է խորհրդատվական բնույթ և որոշ դեպքերում որոշումներն ընդունվում են տնտեսական շահերի օգտին՝ ի վնաս բնապահպանության (MNP 2003):

Հայաստանը տասնվեցերորդ երկիրն է, որը վավերացրել է Օրիուսի կոնվենցիան՝ շրջակա միջավայրի հարցերով որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության, տեղեկատվության և արդարադատության հասանելիության մասին (2001թ.): Ակնկալվում էր, որ Օրիուսի կոնվենցիայի վավերացումից հետո հանրային մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում կխթանվի: Թեև համաձայնագիրը վավերացված է, կոնվենցիայի պահանջներին օրենսդրական ուժ տալու համար նորմատիվային ակտեր չվճակվեցին և այս կոնվենցիան կրում է ձևական բնույթ:

Հայաստանում կան տասնհինգ բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոններ (Օրիուս կենտրոններ)՝ բնապահպանական տեղեկատվության տարածման, հանրության իրազեկության բարձրացման, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության ապահովման համար: Այդ կենտրոնները հանդիսանում են պետության և հանրության համագործակցության կարևոր գործիք: Օրիուսի կենտրոններում տեղի են ունենում հանրային լսումներ, որոնց արդյունքները հրապարակվում են զանգվածային լրատվամիջոցներում, ինչպես նաև Օրիուս կենտրոնների վեբ-կայքերում (MNP 2012):

Բնապահպանական նկատառումները որոշումների ընդունման գործընթացում

Համաձայն Carter-ի (2007)՝ գոյություն ունեն մի շարք վարչական գործիքներ, որոնց միջոցով կառավարությունը բնապահպանական հարցադրումները ներառում է որոշումների ընդունման գործընթացում «ռացիոնալ» ճանապարհով: Այդ դեպքում որոշումները հիմնված են ամբողջական գիտական ու տեխնիկական համակողմանի գիտելիքների և փորձաքննության վրա, այլ ոչ թե կարճաժամկետ քաղաքական շահերից ելնելով: Գոյություն ունեն հետևյալ երեք մեխանիզմները.

1. բնապահպանական ազդեցության գնահատում (ԲԱԳ),
2. ռիսկի գնահատում,
3. ծախսի և օգուտի վերլուծություն:

Վերոնշյալ բոլոր տեխնիկաները լայնորեն կիրառվում են քաղաքականության բոլոր այն բնագավառներում, որտեղ գործողությունները կարող են հանգեցնել շրջակա միջավայրի նշանակալից/էական/զգալի փոփոխությունների: Այդ գործիքները նպատակաուղղված են բնապահպանական մտահոգությունները որոշումների ընդունման գործընթացում ներառելուն:

ԲԱԳ-ը նախատեսված է հատկապես պոտենցիալ բնապահպանական խնդիրները հատկորոշելու համար՝ դրանք կանխելու նպատակով: ԲԱԳ-ը առաջարկվող նախագծերի

(ջրամբար, հիդրոէլեկտրակայան և այլն) նախատեսվող բնապահպանական ազդեցության գնահատման համակարգված գործընթաց է՝ ընդգրկելով սոցիալական, քաղաքական և մշակութային գործոնները (Carter 2007): ԲԱԳ-ը ներառում է ոչ տեխնիկական զեկույց, որը հիմնված է պետական կառավարման մարմինների, փորձագետների, շահագրգիռ խմբերի և հասարակության լայն շրջանակի հետ խորհրդակցությունների վրա: ԲԱԳ-ի նպատակը նախագծի հեղինակին (պետական մարմնի կամ մասնավոր հատվածի միավոր) շահագրգռելն է՝ ներառելու բնապահպանական մտահոգությունները որոշումների ընդունման գործընթացում:

ԲԱԳ-ը ներառում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ խորհրդակցությունների հանրային գործընթաց, ներառյալ պետական կառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների և խմբերի, որոնք ներկայացնում են բնապահպանական, սպառողական և քաղաքացիական շահեր: ԲԱԳ-ը հնարավորություն է տալիս ներգրավել որոշումների ընդունման գործընթացում՝ տեղեկատվության անխոչընդոտ տրամադրման, զեկույցների նախագծերը մեկնաբանելու իրավունքի և ԲԱԳ-ի նախապատրաստական աշխատանքների առնչությամբ արդարադատությանը դիմելու հնարավորության միջոցով:

Ռիսկի գնահատումը գնահատում է մարդկային առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վնասը (նիտրատներ խմելու ջրում կամ կապարի քանակություն օդում): Ռիսկի գնահատումն կիրառվում է ԱՄՆ Շրջակա միջավայրի պահպանության գործակալության կողմից (Environmental Protection Agency):

Ծախսի և օգուտի վերլուծությունը տարիներ ի վեր կիրառվող տնտեսական գործիք է՝ կիրառելի գրեթե բոլոր որոշումների կայացման ժամանակ (Carter 2007): Համաձայն ծախսի և օգուտի վերլուծության ընթացակարգի՝ ցանկացած առաջարկվող նախագծում (օրինակ՝ նոր ճանապարհի շինարարություն կամ վնասակար թունաքիմիկատների օգտագործում) ծախսերը և օգուտները պետք է գնահատվեն՝ ելնելով ընդհանուր սոցիալական բարեկեցության բարձրացման կամ նվազեցման տեսանկյունից: Այս մեթոդը դրամային արժեք կամ սովերային գին է տալիս յուրաքանչյուր հնարավոր ծախսի և օգուտի համար: Այսպիսով, շրջակա միջավայրին դրամական արժեք է տրվում, ինչպես այլ ծախսերին և օգուտներին: Ծախսի և օգուտի վերլուծությունը հնարավորություն է տալիս քաղաքականություն մշակողներին ստանալ նախագծի ամբողջական տնտեսական եկամուտների պատկերը՝ հաշվի առնելով նաև ներառյալ բնապահպանական նկատառումները: Այս գործիքը կիրառվում է ԱՄՆ-ում և Եվրոպայում:

Բոլոր վերոնշյալ տեխնիկաների նկատմամբ գոյություն ունի քննադատություն.

1. Դրանցից ոչ մեկը ճշգրիտ գիտություն չէ, և բավականաչափ մեծ թվով ենթադրություններ են արվում այդ գործիքների կիրառման ընթացքում:
2. Կան մեթոդոլոգիական խնդիրներ: Օրինակ՝ դժվար է հասնել համաձայնության ռիսկի ընդունելի մակարդակի վերաբերյալ: Ծախսի և օգուտի վերլուծությունն էլ անընդունելի է էկոգենտրիկ տեսանկյունից, քանի որ այն դրամական արժեք է տալիս վայրի բնությանը:
3. Բոլոր երեք տեխնիկաները կարող են ենթարկվել վիճարկման և մանիպուլյացիայի (մեքենայության): Քաղաքականություն մշակողները կարող են օգտագործել այդ տեխնիկաները՝ արդեն իսկ ընդունված որոշումները արդարացնելու համար: Օրինակ՝ ԵՄ-ում փոքր թվով նախագծեր են մերժվել ԲԱԳ-ի արդյունքում:

Հայաստանում վերոհիշյալ երեք տեխնիկաներից միայն ԲԱԳ-ն է կիրառվում: Բնապահպանական ազդեցության գնահատումը իրականացվում է 1995թ.¹ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն իրականացվում է հիմնականում հանքարդյունաբերության, շինարարության, լցակայանների և հանգստի վայրերի համար (MNP 2003):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության խնդիրներն են՝

- նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավորության ու նպատակահարմարության վերլուծությունը՝ հաշվի առնելով էկոլոգիական բոլոր սահմանափակումները;
- նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի վրա ու դրա վտանգավորության աստիճանը;
- շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, հայեցակարգի եւ դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանի ստուգումը;
- բնական պաշարների արդյունավետ, բնական օգտագործման ապահովումը;
- շրջակա միջավայրի վրա անդադնալի վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած գործունեության արգելումը;
- հասարակության ներգրավումը և մասնակցության ապահովումը փորձաքննության բոլոր փուլերում:

Բնապահպանական փորձաքննության գործընթացը ներառում է հետևյալ երկու հիմնական փուլերը.

1. Նախաձեռնողը տրամադրում է նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական փաստաթղթերը Բնապահպանության նախարարությանը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո լիազոր մարմինը ընդունում է որոշում բնապահպանական փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ: Եթե բնապահպանական փորձաքննություն անցկացնելու կարիք կա, նախաձեռնողը տրամադրում է պահանջվող բոլոր փաստաթղթերը նույն մարմնին:
2. Երկրորդ փուլում անմիջականորեն իրականացվում է բնապահպանական փորձաքննությունը՝ համաձայն օրենքի:

Նախատեսվող գործողությունների փորձաքննության ընթացքում «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը կարծիքներ է հավաքում բոլոր շահագրգիռ պետական մարմիններից (Քաղաքաշինության նախարարություն, Առողջապահության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Տրանսպորտի և կապի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, համայնքներ) և Բնապահպանության նախարարության տարբեր ստորաբաժանումներից ու ստանում է մասնագիտական կարծիքներ հավաստագրված փորձագետների կողմից՝ անհրաժեշտ որոշումն ընդունելու համար: Ստացված փաստաթղթերի հիման վրա կազմվում է եզրակացության նախագիծը և ներկայացվում է Բնապահպանության նախարարության հանձնաժողովի քննարկմանը: Այնուհետև, եզրակացության նախագիծը տրամադրվում է նախարարի հաստատմանը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը հիմնվում է

- գիտական հիմնավորվածության,
- օրինականության
- որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքների վրա:

Հանրային մասնակցությունը պետք է ապահովվի բնապահպանական փորձաքննության մի շարք փուլերի ընթացքում: Նախնական փուլում նախաձեռնողի կողմից նախնական փաստաթղթերը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում լիազոր մարմինը (Բնապահպանության նախարարությունը) տեղեկացնում է տեղական ինքնակառավարման մարմնին և համայնքի հանրությանը: Տեղական ինքնակառավարման մարմինը և նախագծի նախաձեռնողը պետք է կազմակերպեն հանրային լսում 15 օրվա ընթացքում:

Հանրային լսումների երկրորդ փուլը պետք է կազմակերպվի բնապահպանական փորձաքննության անցկացման ընթացքում (բնապահպանական փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ որոշում ընդունելուց հետո), երբ լիազոր մարմինը ուղարկում է իրեն հասցեագրված փաստաթղթերի պատճենը համայնքի ղեկավարին (որտեղ առաջարկվող նախագիծը իրականացվելու է): Տեղական ինքնակառավարման մարմինը նախաձեռնողի և լիազոր մարմնի հետ համատեղ կազմակերպում է հանրային լսումներ 30 օրվա ընթացքում:

Երրորդ հանրային լսումը պետք է կազմակերպվի հավատարմագրված փորձագետների կողմից բնապահպանական փորձաքննության վերաբերյալ մասնագիտական կարծիք տրամադրելուց հետո: Լիազոր մարմինը պետք է կազմակերպի հանրային լսումներ այլ պետական կառույցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և անկախ փորձագետների մասնակցությամբ 30 օրվա ընթացքում:

Անհրաժեշտ է նշել, որ հանրային լսումներն ունեն ձևական բնույթ: Հասարակության ներգրավվածության մակարդակը հանրային լսումներում շատ ցածր է: Դրա պատճառները կարող են բացատրվել ծանր սոցիալական և տնտեսական պայմաններով, ինչպես նաև դրական տեղաշարժերի նկատմամբ հավատի բացակայությամբ: Մեկ այլ պատճառ է հասարակության բնապահպանական կրթության և տեղեկացվածության ցածր մակարդակը: Հասարակությունը քիչ է տեղյակ իր իրավունքներից և որոշումների ընդունման գործընթացում իր ունեցած դերի կարևորությունից:

2011թ. ընթացքում «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ստացել է նախատեսված գործողությունների և հայեցակարգերի փաստաթղթերի 109 փաթեթներ: Ներկայացված նախագծերից ոչ մեկը չի ստացել բացասական եզրակացություն. 30 նախագծեր գտնվում են քննարկման փուլում: Իսկ 2010թ. ներկայացված 125 նախագծերից միայն երեքն են ստացել բացասական եզրակացություն: Բացասական եզրակացությունների փոքր քանակը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ փաստաթղթերի զգալի մասը վերադարձվում է վերախմբագրման. առանց բացասական եզրակացության և վերանայման այդ նախագծերը ստանում են դրական եզրակացություն:

Խնդիրը կարգավորող օրենքն ունի մի շարք թերություններ. այն համալրված չէ համապատասխան ենթաօրենսդրական ակտերով, հանրային լսումների անցկացման հետ կապված հստակության պակաս կա, օրենքը չի նախատեսում օրենքի խախտման համար սանկցիաներ, որոշ հոդվածներ թերի են և օրենքը չի համապատասխանում այլ օրենքների հետ: Այդ թերությունները վերացնելու համար 2012թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի լրացումներ են մշակվել:

Օրենքի լրացումները նախատեսում են նախատեսված գործողությունների դասակարգում 3 խմբերի՝ ելնելով շրջակա միջավայրի և տնտեսության վրա ազդեցության մակարդակից: Նախատեսվում էր, որ կիստակեցվեն փորձաքննության ժամկետները (40–60 օր՝ ելնելով դասակարգման խմբից): Լրացումները նաև նախատեսում էին, որ նախատեսվող ծրագրի վերաբերյալ ազդակիր համայնքի բացասական կարծիքը կարող է որպես հիմք ընդունվել փորձաքննության բացասական եզրակացության համար: Ըստ լրացումների՝ նախատեսվող ծրագրի իրականացումը ևս անթույլատրելի է, եթե որոշումն ընդունվել է՝ առանց ազդակիր համայնքի կարծիքը հաշվի առնելու: Օրենքի լրացումները ընդունվել են Ազգային ժողովի կողմից, սակայն այն մերժվել է ՀՀ նախագահի կողմից:

Առաջարկություններ բնապահպանական շարժման և ակտիվիզմի վերաբերյալ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներկա պետական իրավիճակը բնապահպանական ակտիվիզմի վերաբերյալ՝ ստորև ներկայացված են մի քանի առաջարկություններ, որոնք ակնհայտորեն պահանջվում են առավել արդյունավետ բնապահպանական կառավարման և զարգացման համար: Տվյալ առաջարկությունները նպատակ ունեն իրատեսական դարձնելու բնապահպանական ակտիվիզմի հնարավոր ուղիները դեպի ինստիտուցիոնալ ինտեգրում, օրենսդրական դաշտի մեջ:

1. Նպատակ ունենալով հնարավոր դարձնել երկխոսությունը բնապահպանական ակտիվիզմի և որոշում կայացնող մարմինների միջև՝ պետք է ստեղծվի երկխոսության համընդհանուր հարթակ: Տվյալ գործընթացը հնարավոր է իրականացնել ստեղծելով միջանկյալ մարմին, որի գործունեությունը կլինի անկախ թե՛ ղեկավար մարմիններից, և թե՛ բնապահպանական ակտիվիզմից, որը իր գործունեության սկզբունքով կարող է լինել կամավորական բնույթի (Օր.՝ Բնապահպանական Հասարակական Դաշինք): Մարմինը կունենա պարտավորություն ուսումնասիրելու և գնահատելու բնապահպանական խնդիրները, որոնք բերում են հասարակական ակտիվիզմի և պահանջի (ներառյալ բնապահպանական ակտիվիզմը), ճշգրիտ ձևակերպելու հասարակական ծայնը և ներկայացնելու տվյալ պահանջը համապատասխան ղեկավար մարմիններին: Քանի որ հասարակական պահանջը պետք է ձևակերպված և կազմավորված լինի՝ որպես պահանջը ճշգրտորեն արտահայտող փաստաթուղթ, տվյալ միջանկյալ մարմինը իր կազմում պարտավորված է ներառել գիտնականների, ֆինանսական վերլուծաբանների, կառավարման մասնագետների և այլն:
2. Պետական մարմինների տեսակետից՝ հարկավոր է կառուցել օրենսդրական աշխատանքային գործընթացների պլան, որը կապահովի Բնապահպանական Ակտիվիզմի ծայնը պարտադիր հիմքով լսելի պետական մարմինների կողմից: Անկախ նրանից, թե՛ առաջարկ համար 1-ը կդիտարկվի թե՛ ոչ, տվյալ առաջարկի ընդունման անհրաժեշտությունն առավելագույնն է, որը վճռորոշ դեր կունենա հասարակական ակտիվիզմի նպատակների՝ (այսինքն ակտիվիզմի հետևանքով ընդունվող որոշումների) օրինականացման գործընթացում:
 - ա. Եթե առաջարկ 1-ը դիտարկվի՝ մի կողմից ղեկավար մարմինների համար կստեղծվեն ավելի հասանելի պայմաններ վերանայելու և գնահատելու ճշգրիտ

կազմված կոնկրետ պահանջները, որոնք բխում են հասարակական ակտիվիզմից և կազմված են միջանկյալ օղակի (տես առաջարկ համար 1) կողմից, միևնույն ժամանակ ունենալով հիմքեր՝ թե գիտական ոլորտից և թե ֆինանսատնտեսական ու կառավարման համակարգերի զարգացման տեսակետից: Մյուս կողմից իրավիճակը կունենա անուղղակի ճնշում դեկավար մարմինների կողմից՝ չընդունելու և չդիտարկելու հասարակական պահանջը ընդհանրապես, առանց պատճառաբանությունների:

- բ. Եթե առաջարկ 1-ը չդիտարկվի՝ դեկավար մարմինները պարտավորված կլինեն աշխատել այսպես կոչված խառնաշփոթում՝ դիտարկելով քառտիկորեն առաջացող, օբյեկտիվ և ոչ օբյեկտիվ հասարակական պահանջի դեպքեր: Հասարակությունը կունենա ավելի շատ ազատություն, որը կբերի հասարակական պահանջի հոսքի ավելացմանը ուղղված ինստիտուցիոնալ փոփոխությունների: Այս դեպքում վերը նշված գործընթացները կստանան հակառակ ընթացք (տես առաջարկ համար 2Ա):
3. Նպատակ ունենալով ավելացնել հասարակական մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում՝ բնապահպանական ոլորտում բոլոր գալիք որոշումները պետք է հայտարարվեն հասարակայնորեն: Մա նշանակում է օգտագործել զանգվածային լրատվական միջոցները (Հեռուստատեսություն, Ռադիո, Կայքեր, Հանրային Ցանցեր և այլն), գալիք որոշումների մասին հասարակության իրազեկությունը բարձրացնելու նպատակով՝ ապահովելով խելամիտ ժամանակ հասարակության կողմից տվյալ աշխատանքի վերանայման համար (առնվազն երկու շաբաթ մինչ որոշման ընդունումը):
4. Հանրային շահի արձագանքման մեթոդոլոգիայում պետք է ներդրվի կառավարման համակարգ, որը կկարգավորի դեկավար մարմինների կողմից տրվող արձագանքները հասարակական ակտիվիզմին, որոնք էլ իրենց բնույթով հասարակության կողմից առաջադրված լուծումներ են՝ ի վերջո տեղ գտնելով օրենսդրական դաշտում, որպես օրենքով սահմանված գործընթացներ: Սրանք իրենցից ներկայացնում են ուղեցույցների և կանոնակարգերի ընդհանուր կազմ, որոնք բերում են հանրային ճայնք քաղաքականապես ընդունելի մակարդակի (այսինքն՝ հանրային շահը արտահայտող ակտիվիզմը ձևակերպված և հիմնավորված կլինի գիտականորեն, աջակցված հետազոտական հաստատություններից և այլն)
5. Շրջակա միջավայրի և ինդուստրացման միջև փոխազդեցությունը շփման եզրերունի թե ձեռնարկատիրության և թե գիտության ու ակտիվիզմի հետ: Այդ պատճառով տվյալ ոլորտում բոլոր որոշումների ընդունման գործընթացներում, ներառյալ ծախս-շահույթ տիրույթ, գիտական եզրակացություններն ու հանրության համաձայնությունը պահաջված են նշված գործընթացներում: Նշված կետերից ոչ մեկը անտեսման ենթակա չեն: Ստորև նարկայացված է ոլորտների փոխկապակցվածությունը:
- ա. Ձեռնարկատիրություն. որոշումները, որոնք ընդունվում են ուղղակի ֆինանսական շահի նպատակով, դեպի կառավարություն կամ մասնավոր սեկտոր, հարկավոր են հիմնավորված լինեն գիտականորեն և ունենան խիստ հանրային աջակցություն: Բացի ուղղակի ֆինանսական հոսքերից, անուղղակի կորուստ-

ները հարկավոր է նույնպես հաշվարկել (Օր. Օդի Ադոպտացիայի վերահսկում Kyoto 1997)։

բ. Գիտություն. գիտական եզրակացություններն ու հիմնավորումները պետք է ունենան առաջնահերթություն ֆինանսական շահերի նկատմամբ, քանի որ Շրջակա Միջավայրը ինքնին վճռորոշ գործոն է մարդկային գոյության և ազգային ժառանգության համար, ինչպես նաև պետք է հաշվի առնվի տեղանքի/օբյեկտի գիտական արժեքը (ինչպես օրինակ՝ Հայաստանը աշխարհում գոյություն ունեցող 34 կենսաբազմազանական կենտրոններից է – IUCN 2009)։

գ. Բնապահպանական ակտիվիզմ (ԲԱ)։ ԲԱ-ի ծայրը ոչ միայն պետք է աջակցված լինի հանրային շահով, այլ նաև հիմնավորված գիտական հետազոտություններով և տվյալներով, ինչպես նաև այն պետք է առաջարկի իրավիճակի ելքի այլընտրանքային տարբերակներ՝ ներառելով երկկողմանի դրական արձագանքը։

6. Որոշումների վերահսկողություն. անգամ եթե որոշակի որոշում համապատասխանում է վերը նշված բոլոր կետերին (տես առաջարկ համար 5, ենթակետեր՝ Ա, Բ, Գ), դրանք վերջնական գնահատում և վերանայում պետք է անցնեն որոշակի քանակով կազմակերպությունների ժողովի կողմից։

ա. Կազմակերպությունների ընտրությունն ու նշանակումը. ոչ բոլոր բնապահպանական կազմակերպությունները կարող են համապատասխանել տվյալ գործընթացի հաջող իրականացմանը՝ դիտարկելով տվյալ կազմակերպության գիտական մակարդակը և փորձը։ Այդ պատճառով պետք է կառուցվի ընտրության պլան՝ համապատասխան կազմակերպությունների ընտրության նպատակով։ Իրականում կազմակերպությունների խումբը (վերջնական գնահատման կազմակերպություններ) կազմված կլինի հավասար քանակով կազմակերպություններից, որոնք գործում են պետական մարմիններին և անկախ կազմակերպություններին կից, ինչպիսիք են ՀԿ-ները։ (Օր՝ 3 ՀԿ-ներ և 3 Պետ. Հաստատություններ)։ Գնահատման և վերանայման արդյունքները պետք է հայտարարվեն միաժամանակ, ինչը թույլ կտա խուսափել ներխուժային ճնշումներից որոշումների չիմացության պատճառով։ Որոշումը վերջնականապես հաստատվում է, եթե այն հավաքում է ընդհանուր ձայների առնվազն 51%-ը։ Խմբում ներառվող կազմակերպությունների ցանկը պետք է փոփոխվի որոշված համակարգային պլանով՝ թույլ տալով ընտրելու կազմակերպությունները պատահական սկզբունքով (Օր.՝ ամեն **եռամսյակ կամ 20 որոշում** անց խումբը կազմող կազմակերպությունները պետք է փոփոխվեն՝ խուսափելով համակարգի գործունեության հնարավոր կոռուպցիայից և ճահճացումից։ Խմբից դուրս եկած կազմակերպությունները զրկվում են վերընտրման իրավունքից՝ պարտավոր լինելով բաց թողնել կազմակերպությունների առնվազն մեկ վերընտրման շրջան, մեկ տարվա ընթացքում նույն կազմակերպության վերընտրման առավելագույն քանակը պետք է չգերազանցի 3-ը։ Կազմակերպությունները պետք է ընտրվեն որոշակի չափանիշների դիտարկմամբ, ինչպիսիք են հաջող իրականացված նախագծերի և ծրագրերի ընդհանուր քանակը,

գիտական հոդվածների և աշխատությունների ընդհանուր քանակը (հաշվի առնելով աշխատությունների գիտական արժեքը – Ազդեցության Գործոնը /Impact Factor/), տարեկան ֆինանսական շրջանառությունը, անդամների քանակը և մասնագիտական որակավորումները և այլն:

Տվյալ համակարգը թույլ կտա պարտադրել ղեկավար մարմիններին ուշադրության տակ առնել հանրային խոսքը, բնապահպանական ակտիվիզմը, ներառել այն օրենսդրական դաշտը՝ միաժամանակ նվազեցնելով որոշումների կայացման ընթացքում կոռուպցիոն ռիսկերը:

Առաջարկություններ կառավարության «կանաչեցման» համար

- Կատարել փոփոխություններ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքում և բնապահպանական ազդեցության գնահատման գործընթացներում՝ կատարելագործելով հանրային մասնակցության վերաբերյալ դրույթները, մասնավորապես՝
 - ✳ Երկրորդ պետք է նկարագրի, թե ինչպես պետք է իրականացվի հանրային մասնակցությունը, մասնավորապես՝ պետք է նկարագրվի, թե ինչպես է հանրային կարծիքը հաշվի առնվելու որոշումների ընդունման ժամանակ,
 - ✳ Բնապահպանության նախարարությունը պետք է գործնական քայլեր իրականացնի պատշաճ հանրային մասնակցություն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ էլեկտրոնային գործիքների օգտագործում՝ նախարարության՝ պարբերաբար թարմացվող և օգտագործողին հաճելի ինտերնետային կայք (համալրված անհրաժեշտ փաստաթղթերով՝ նախատեսված նախագծերի վերաբերյալ՝ ամբողջական ԲԱԳ գեկույց, համապատասխան քարտեզներ, տարբեր շահագրգիռ կողմերի կարծիքներ, էլեկտրոնային մեկնաբանությունների հնարավորություն և դրանց պատասխանելու պարտավորություն՝ նախարարության կողմից՝ մատնանշելով, թե ինչ չափով են այդ կարծիքները հաշվի առնվել կամ ինչու չեն հաշվի առնվել)
 - ✳ Հանրության մասնակցության պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով Բնապահպանության նախարարությունը պետք է հատկորոշի և ներառի բոլոր շահագրգիռ կողմերին որոշումների ընդունման գործընթացում,
 - ✳ Հանրային լուումների հետ կապված.
 - Հանրային լուումների անցկացման վայրի և ժամկետի մասին ծանուցելով բոլոր շահագրգիռ կողմերին բավականաչափ կանխավ՝ հնարավորություն տալով նրանց պատշաճ կերպով պատրաստվել,
 - Ձայնա-տեսագրելով և հնարավորության դեպքում հեռարձակելով Ինտերնետի միջոցով (կախված նախատեսվող ծրագրի կարևորությունից),
 - Պատշաճ կերպով հանրային լուումների արձանագրություններ պատրաստել և դրանք Ինտերնետում հասանելի դարձնել,
- Կատարել լրացումներ օրենսդրության մեջ՝ բնապահպանական օրենսդրության մշակման հարցում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ձևայնացնելու նպատակով,

- Ստեղծել խորհրդատվական խումբ՝ ներառելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների որպես «անկախ պահապան շուն» (“an independent watchdog”), որը անմիջականորեն հաշվետու կլինի վարչապետին,
- Պատշաճ տնտեսական մեթոդներ օգտագործել բնական ռեսուրսների գնահատման համար և էականորեն մեծացնել բնապահպանական և բնօգտագործման վճարները,
- Կատարել փոփոխություններ օրենսդրության մեջ՝ ընկերություններին շուկայական խթաններ տրամադրելու նպատակով.
 - ⌘ Աջակցություն նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը հանք-արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և տնտեսության այլ բնագավառներում շուկայական խթանների օգտագործման միջոցով (սուբսիդիաներ, հարկային արտոնություններ);
 - ⌘ Կիրառել հարկեր հնացած տեխնոլոգիաների կիրառման համար
 - ⌘ Ստեղծել ապահովագրական հիմնադրամներ՝ բնապահպանական վնասների ռիսկերը ծածկելու համար;
- Օգտագործել վարչական այլ տեխնիկաներ բնապահպանական մտահոգությունները որոշումների ընդունման գործընթացում ներգրավելու համար (ծախսի և օգուտի վերլուծություն, ռիսկի գնահատում):

Գրականություն

1. Carter N. 2007. The politics of the environment: ideas, activism, policy. 2nd edition. Cambridge University Press.
2. Dalton, J.D., Reccia, S. and Rohrschneider R. The Environmental Movement and the Modes of Political Action. *Comparative Political Studies* 2003 36: 743–771.
3. della Porta, D. and Diani, M. 2006. Social Movements, 2nd edition. Oxford: Blackwell.
4. Diano, M. and Donati, P. 1999. Organisational change in Western European Environmental groups: a framework for analysis. *Environmental Politics*, 8 (1): 13–34.
5. Jacobs, M. 1991. The green economy. London: Pluto.
6. Ministry of Nature Protection (MNP). 2012. Ministerial Report 2007–2011. Yerevan. URL: http://www.mnp.am/images/files/nyuter/2012/report2007-2011_eng.pdf.
7. Ministry of Nature Protection of the Republic of Armenia. 2003. State of the Environment of the Republic of Armenia in 2002. National report. Yerevan.
8. National statistical service of the Republic of Armenia (NSS). 2011. Environment and Natural Resources in the Republic of Armenia for 2010 and time series (2005 – 2010). Yerevan. URL: <http://armstat.am/en/?module=publications&mid=6&id=1298>.
9. Organisation for Economic Co-operation and Development (OECD). 2005. Promoting compliance with environmental requirements in Armenia. Recommendations from an international review.
10. Rootes, C. 2007 ‘Environmental Movements’ in George Ritzer (ed.) *Blackwell Encyclopedia of Sociology*, vol. 3, pp. 1428–33.
11. Van der Heijden, H.A. 1997. Political opportunity structure and the institutionalisation of the environmental movement. *Environmental Politics*, 6(4): 25–50.
12. World Commission on the Environment and Development (WCED). 1987. Our common future. Oxford University Press (The Brundtland Report).

